

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Կը Շարունակեն Չարստանալ Չայաստանի Ժողովուրդի Հաշույն

ՀՀ Կառավարության վերջին նիստի ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինյանը յայտնեց որ, Չայաստանի չորս մարզի մէջ Ոստիկանութեան պարեկային ծառայութիւններ ստեղծելու համար կառավարութիւնը 3 միլիար 107 միլիոն դրամ (մօտ 7.5 միլիոն Ամերիկեան Ըոլար) յատկացուցած է «Թոյոթա Երեւան» ընկերութեան 175 ինքնաշարժ գնելու համար, գնման ընթացակարգը եղած է մէկ անձէ եւ առանց մրցոյթի:

Այս տեղեկութիւնը զարմանք յառաջացուց եւ արժանացաւ լայն քննադատութեան նկատի ունենալով որ, «Թոյոթա Երեւան» ընկերութիւնը կը պատկանի Ռոբերդ Քոչարեանի ընտանիքին եւ այս գործարքով ան միլիոնաւոր տուլարներու շահոյթ պիտի ապահովէ Չայաստանի հարկատուներու հաշույն: Շատեր սկսան խօսիլ Փաշինեան-Քոչարեան զաղտնի գործակցութեան մասին, հակառակ որ, Կառավարութեան նոյն նիստի ընթացքին Վարչապետը յայտնեց որ, կարելոր կը համարէ թափանցիկութեան սկզբունքներէն մեկնելով այս հարցի քննարկումը փակ նիստի օրակարգէն հանելով բերել բաց քննարկման, որպէսզի ժողովուրդը ծանօթ ըլլայ հարցի մանրամասնութիւններուն:

Համաճարակէն ասդին եւ ապա Ռուս-Ուքրաինական պատերազմի բերումով ինքնաշարժներու մեծ պակաս կայ ամբողջ աշխարհի մէջ: Այսօր, նոյնիսկ Ամերիկայի մէջ դժուար է նոր մեքենայ գտնել շուկայի վրայ եւ գտնելու պարագային իսկ, պէտք է վճարել պաշտօնական զինէն շատ ւելիւն:

Այս նոյն դժուարութեան մատնուած է Չայաստանի կառավարութիւնը, որ կը պատրաստուի ոստիկանութեան Պարեկային Ծառայութիւնը Երեւանէն յետոյ տարածել նաեւ Տաւուշի, Գեղարքունիքի, Կոտայքի ու Արագածոտնի մարզերուն մէջ: Այս նորաստեղծ ոստիկանութիւնը կու գայ փոխարինելու ճանապարհային ոստիկանութեան եւ օժտուած է յաւելեալ պատասխանատուութիւններով՝ հսկելու համար կարգ ու կանոնին արհեստավարժ բարձր մակարդակով:

Բարձրացած աղմուկին պատճառաւ ՀՀ ոստիկանական համակարգի բարեփոխումներու յանձնաժողովի անդամ Դանիէլ Իոաննիսեան բացատրութիւններ տալով տեղեկացուց թէ, Մայիս ամսոյն յայտարարուած է մրցոյթ 175

Չայաստանի Ու Ատրպէյճանի Միջեւ Խաղաղութեան Հասնելու Պատմական Հնարաւորութիւն Կայ. Պլինքըն

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարը հեռախօսազրոյցներ ունեցած է Հայաստանի վարչապետին ու Ատրպէյճանի նախագահին հետ՝ նշելով, որ տարածաշրջանին մէջ խաղաղութեան հասնելու պատմական հնարաւորութիւն կայ:

Պետական Քարտուղարութեան հաղորդագրութեան համաձայն, թէ՛ Նիկոլ Փաշինեանի, թէ՛ Իլհամ Ալիևի հետ զրոյցներուն ընթացքին էնթրենի Պլինքըն Ուաշինկթընի օժանդակութիւնը առաջարկած է հայ-ատրպէյճանական հաղորդակցական ուղիներու վերաբացման գործին: Ողջունած է Թիֆլիսի մէջ վերջերս կայացած Հայաստանի ու Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներուն հանդիպումը:

Փաշինեանի հետ զրոյցէն յետոյ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայս նաեւ յայտնած է. «Պլինքըն նաեւ վերահաստատեց աջակցութիւնը Եւրոմիութեան միջնորդութեամբ ընթացող արդիւնաւէտ քննարկումներուն եւ նշեց, որ 1994-էն Միացեալ Նահանգները եղած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ եւ պատ-



Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ենթընի Պլինքըն

րաստ է տեւական եւ համապարփակ խաղաղութեան հասնելու հարցով օգնելու Հայաստանին եւ Ատրպէյճանին՝ ներգրաւուելով երկկողմ ձեւաչափով եւ նոյնկերպ մտածող

Չայաստան Կը Հրաժարի Զանգեզուրի Միջանցքի Մասին Հարց Քննարկել

Հայաստանի կողմէ բազմիցս նշուած է, որ Զանգեզուրի միջանցքի տրամաբանութիւնը որեւէ կերպ ընդունելի չէ Հայաստանի համար, լրագրողներու հետ հանդիպման ընթացքին այս մասին յայտնեց ՀՀ Ազգային ժողովի Արտաքին Յարաբերութիւններու Մշտական Յանձնաժողովի նախագահ, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովին մէջ ՀՀ ԱԺ պատուիրակութեան անդամ Խոտարտ Աղաճանեանը:

«Կարելոր եմ համարում նշել, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ատրպէյճանի նախագահի ու Եւրոպայի Խորհուրդի նախագահի վերջին հանդիպման արդիւնքում, երբ Ատրպէյճանի նախագահը համապատասխան յայտարարութեամբ է հանդէս եկել, այդ թուում՝ նաեւ Զանգեզուրի միջանցքը չի շտապեցնուել, ԵՄ նախագահի գրասենեակը հերքող յայտարարութեամբ է հանդէս եկել, որ նման բան չի քննարկուել», նշեց Աղաճանեան:

Անոր խօսքով՝ Ատրպէյճանի գործելակերպը չ'օգնէր կամ խրախուսէր կառուցողական քննարկումները:

«Յաւօք, մեր հարեւաններն առանձնանում են ոչ-պատշաճ կամ պայմանաւորուածութիւնները չպահող գործելակերպով», նշեց ՀՀ Ազգային ժողովի Արտաքին Յարաբերութիւններու Մշտական Յանձնաժողովի նախագահը:

Աղաճանեան վստահեցուց, որ Հայաստան կը հրաժարի Զանգեզուրի միջանցքի մասին հարց քննարկելէ ու հրաժարած է ի սկզբանէ:

Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկավարները հնարաւոր է յուսալիկային հանդիպին: Այս մասին յայտնեց Խոտարտ Աղաճանեան, առանց յտակացնելու ժամկէտները:

Հնդկական Մամուլի Համաձայն Չայաստան Մտադիր Է Հնդկաստանէն Գնելու Ռազմական Անօդաչու Սարքեր



Երեւանը մտադիր է Տելհիէն ռազմական անօդաչու սարքեր եւ այլ սպառազինութիւն գնել, ու այդ նպատակով նախորդ ամիս Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան պատուիրակութիւնը մեկնած է Հնդկաստան՝ գնման ենթակայ գինատեսակներու ցանկով: Այս մասին գրած է Հնդկական «DnaIndia»-ն, որ Հնդկաստանի առեւտրատնտեսական կեդրոնի՝ Մումպայի անգերէն լեզուով մեծագոյն թերթն է:

Թերթը մանրամասնութիւններ չի հաղորդէր անօդաչու սարքերու եւ այլ սպառազինութեան մասին է: Ռազմական անօդաչուներու եւ անոնց

դէմ պայքարի միջոցներու ստեղծման ուղղութեամբ Հնդկաստանը նոր չ'աշխատիր: Այդ նպատակով հնդկական ընկերութիւնները վերջին տարիներուն կը համագործակցին յատկապէս Իսրայէլի հետ: 2019 թուականին հիմնադրուեցաւ Իսրայէլ-հնդկական Adani Defence & Aerospace ընկերութիւնը:

«DnaIndia»-ն կը ներկայացնէ անանուն մնալ փափաքող հայաստանցի պաշտօնեային խօսքերը, թէ դարաբաղեան նախորդ պատերազմը հարկադրած է Երեւանին վերագնահատել իր ռազմական կա-

**«ՄԱՍԻՍ»Ի
ՏԱՐԵԿԱՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴԸ**

Տարեկան արձակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսներ Օգոստոսի առաջին եւ երկրորդ շաբաթները:

Մեր յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ թուականի՝ Շաբաթ, Օգոստոս 20-ին:

Այս ընթացքին կը շարունակէ գործել համացանցային Massispost.com մեր կայքէջը, Անգլերէն եւ Հայերէն բաժիններով:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ատրպեյճանի «Բարի» եւ «Չար» «Ոստիկանները» Կեղծ Երկընտրանք Են Ստեղծում Ղարաբաղեան Համատեքստում

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ատրպեյճանի իշխանութիւնները վերջին շրջանում փորձում են վերլուծական մակարդակում վերահսկողութիւն հաստատել Լեռնային Ղարաբաղի ապագայի վերաբերեալ խօսույթների նկատմամբ: Ատրպեյճանական կամ պրո-ատրպեյճանական տարբեր փորձագէտներ պարբերաբար միջազգային հարթակներում հանդէս են գալիս յօդուածներով, որտեղ առաջ են քաշում Արցախի հիմնահարցի վերաբերեալ իրենց տեսլականները:

Այդ տեսլականները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին մօտեցման կողմնակիցները յայտարարում են այն, ինչ այժմ հանդիսանում է նաեւ Ատրպեյճանի պաշտօնական գիծը եւ վերջին շրջանում բազմիցս հնչեցուցել է Իլհամ Ալիեւի կողմից: Ըստ այս մօտեցման՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնը որեւէ յատուկ կարգավիճակ չպիտի ունենայ Ատրպեյճանի կազմում: Այս գծի հիմնական թէզը այն է, որ Ատրպեյճանը բազմազգ եւ բազմադաւան պետութիւն է, որի բոլոր քաղաքացիների իրաւունքները պաշտպանուած են: Իսկ Լեռնային Ղարաբաղի հայերը իրենց քանակով նոյնիսկ ամենամեծ փոքրամասնութիւնը չեն: Սա Պաքուի ամենամաքսիմալիստական մօտեցումն է, որը ակտիւօրէն քարոզուած է նաեւ միջազգային վերլուծական պարբերականների էջերում: Այսպէս, Յուլիսի 11-ին թուրք քաղաքագէտ Հակոբ Յաւուզը յայտնի «Միջազգային յարաբերութիւններ» պարբերականում հեղինակել է «Ինչու ինքնավարութիւնը կենսունակ լուծում չէ Ղարաբաղում» վերտառութեամբ յօդուած: Յօդուածի մէջ թուրք փորձագէտը

նշում է, որ Ատրպեյճանի կազմում Լեռնային Ղարաբաղին տարածքային ու էթնիկ ինքնավարութեան տրամադրման դէպքում Ատրպեյճանը մշտապէս կանգնած է լինելու ապակայունացման վտանգի առաջ: Յաւուզը մի շարք քարոզչական թէզեր է առաջ քաշում իր դիրքորոշումը հիմնաւորելու համար: Նա, մասնաւորապէս, ցիտում է ատրպեյճանցի քաղաքագէտ Արազ Ասլանլիի խօսքերը.

«Ինքնավարութիւն չպիտի լինի երկու պատճառով: Առաջինը այն է, որ հայերը օգտագործելու են ինքնավարութիւնը նոր պատերազմի պատրաստուելու համար: Երկրորդը՝ Ղարաբաղի հայերը բնակչութեան 0,5 տոկոսից էլ քիչ են: Եւ ո՞վ կը վճարի այդ առանձին քաղաքական ինստիտուտների ծախսերը: Հայաստանի Հանրապետութիւնը մօտ 20 միլիոն տղար էր ամէն տարի ուղղում ԼՂԻՄ-ի այդ ինստիտուտների գործունէութիւնը ապահովելու համար: Պաքուն չի անելու եւ չպիտի անի դա»:

Արցախի ապագայի վերաբերեալ ատրպեյճանական փորձագէտների կողմից տարածուող երկրորդ հիմնական պատումը այն է, որ Լեռնային Ղարաբաղը կարող է ունենալ ինչ-որ սահմանափակ ինքնավարութիւն, որը սակայն չի ենթադրում անվտանգային լուրջ երաշխիքներ կամ քաղաքական իշխանութեան ապակեդրոնացում:

Վերջին շրջանում այս մօտեցումը ներկայացնող ամենակնառու յօդուածը հրատարակել է ատրպեյճանցի փորձագէտ Քամալ Մաքլի-Ալիեւը: Մաքլի-Ալիեւը Commonsplace հարթակում հեղինակել է «Ինքնավարութիւնը տարբերակներից է, որի միջոցով հայ-ատրպեյճանական յարաբերութիւնների որոշ խնդիրներ կարող են լուծուել» վերտառութեամբ յօդ-

ուած: Այս յօդուածում ատրպեյճանցի փորձագէտը առաջարկում է կիրառել Ալանդեան կղզիների մոտելը:

Նա, մասնաւորապէս նշում է, որ Լեռնային Ղարաբաղում ալանդեան մոտելից կարելի է փոխառել այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են լեզուական իրաւունքների յատուկ ռեժիմը, որը կ'ենթադրի հայերէնի ճանաչում որպէս պաշտօնական լեզուի նախընտրութիւնը եւ դրա կիրառումը դպրոցներում, մամուլում եւ տեղական ինքնակառավարման մարմիններում: Միւս բաղադրիչը, ըստ հեղինակի, պէտք է լինի մշակութային իրաւունքների ապահովումը, որը հնարաւորութիւն կը տայ Լեռնային Ղարաբաղի հայերին սեփականութեան իրաւունք ունենալ մշակութային վայրերի նկատմամբ եւ տնօրինել զբօսաշրջութիւնից ստացուող եկամուտները: Այս մոտելով ենթադրուած է, որ հայերը պիտի նաեւ բացառիկ իրաւունքներ ունենան Լեռնային Ղարաբաղում անշարժ գոյքի, ինչպէս նաեւ տեղական հարկերի վերահսկողութեան նկատմամբ:

Մաքլի-Ալիեւը նշում է, որ այս իրաւունքները պէտք է սահմանուեն միջազգային պայմանագրի միջոցով, որի իրականացման երաշխաւորները կը լինեն տարածաշրջանային պետութիւնները: Հեղինակը յաւելում է նաեւ, որ այդ պայմանագրով պէտք է երաշխաւորուի Լեռնային Ղարաբաղի ամբողջական ապառազմականացումը եւ չէզոքացումը: Լեռնային Ղարաբաղում չեն կարող տեղակայուել ռազմաբազաններ, ինքնավարութեան սահմաններում չպիտի լինի պարտադիր զինուորական ծառայութիւն, իսկ գէնք կրելու իրաւունք կ'ունենան միայն յատուկ եւ ոստիկանական ուժերը:

Թուրքիան Փորձում Է Բարձրացնել Գինը. Չաւուշօղլուի Ակնարկն Ու Քըլըչի Այցը Սահման

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Տեղեկութիւն է տարածուել, որ հայ-թուրքական կարգաւորման գործընթացի թուրքական յատուկ բանագնաց Սերդար Քըլըչը այցելել է Կարսի շրջան, ունեցել հանդիպումներ, անգամ եղել հայ-թուրքական սահմանի չզորոնող անցակետում: Թուրքիայի յատուկ բանագնացի այցը յաջողուած է թուրքիայի արտգործնախարար Չաւուշօղլուի յայտարարութեանը, կապուած հայ-թուրքական կարգաւորման հետ: Չաւուշօղլուն մասնաւորապէս ասել էր, թէ Հայաստանից ակնկալում են քայլեր, քանի որ միայն խօսքերը քիչ են: Իհարկէ նա չէր ասել, թէ ինչ քայլերի մասին է խօսքը: Սակայն, Չաւուշօղլուի յայտարարութիւնը տարօրինակ էր, քանի որ յաջողուած էր սահմանը երրորդ երկրների քաղաքացիների համար բացելու, նաեւ երկկողմ օդային բեռնափոխադրումներ սկսելու ուղղութեամբ կոնկրետ քայլերի մասին պայմանաւորութեանը, ինչպէս նաեւ Փաշինեան-Էրտողան հեռախօսազրույցին: Ինչու էր թուրքիայի արտգործնախարարը այդ միջոցառում, որը խօսում էր որոշակի

գործնական համաձայնութեան մասին, յանկարծ արտայայտուած «նախապայմանային» շեշտադրումներով: Այստեղ իհարկէ պէտք է նկատել, որ կայ մի հանգամանք, կապուած Ատրպեյճանի հետ: Թուրքիան ունի որոշակի «կախուածութիւն» Ատրպեյճանի դիրքորոշումից եւ տրամադրուածութիւնից:

Անքարան ստիպուած է լինելու պարբերաբար «հանգստացնել Պաքուին, որ հայ-թուրքական կարգաւորման հարցում չի «մոռանում» Ատրպեյճանին: Խնդիրն իհարկէ Ատրպեյճանին «խաբելը» չէ, բայց կասկածից վեր է, որ թուրքիայի եւ Ատրպեյճանի աշխարհաքաղաքական, ռազմա-քաղաքական տրամաշափերը լինելով կայուն տարբեր, առաջացնում են նաեւ խնդիրներ, երեւոյթներ, հեռանկարային, ռազմավարական եւ մարտավարական դիտարկումների հանդէպ տարբեր գնահատումներ: Իսկ Ատրպեյճանի պարագայում կայ նաեւ այն, որ Պաքուն այդուհանդերձ ունի Անքարայի հանդէպ որոշակի ինքնավարութեամբ դիրքաւորուելու հնարաւորութիւն, հաշուի առնելով այն, որ ներկայումս առա-

ջացել է «ատրպեյճանական կարեւորութեան» յաւելեալ աստիճան թէ Արեւմուտքի, թէ Ռուսաստանի համար: Չաւուշօղլուի յայտարարութիւնը լոկ այդ հանգամանքով պայմանաւորելն իհարկէ թերեւս չի լինի իրարժէք: Կայ նաեւ այլ, եւ թերեւս գլխաւոր հանգամանքը, որի մասին խօսել եմ բազմիցս:

Թուրքիայի համար հայ-թուրքական կարգաւորման գործընթացը «փոխարկելի» ռեսուրս» է Արեւմուտքի, Ռուսաստանի, Իրանի հետ յարաբերութիւններում, որպէս նուազագոյն շրջանակ: Չաւուշօղլուի յայտարարութիւնը յուշում է, որ թուրքիան այդ հարցում բախուել է խնդիրների: Որտե՞ղ են դրանք՝ Իրանում Յուլիսի 19-ին տեղի ունեցած Ռաչիսի-Փուլիս-Էրտողան եռակողմ հանդիպման, թէ անցնող օրերին կովկաս՝ ԱՄՆ ու ՌԴ հետախուզութիւնների դեկավարների միմեանց յաջողած այցերի շրջանակում, բնականաբար ասելը դժուար է, բայց նկատելի է, որ թուրքիան մի կողմից շարունակում է աշխատանքը, միւս կողմից փորձում բարձրացնել գինը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ատրպեյճանական կամ փրօ-ատրպեյճանական փորձագէտների կողմից առաջ քաշուող այս երկու մօտեցումները դիտարկելիս առաջին հայեացքից կարող է տպաւորութիւն ստեղծուել, որ դրանց միջեւ ինչ-որ լուրջ բովանդակային տարբերութիւն գոյութիւն ունի: Այնուամենայնիւ, ակնյայտ է, որ առաջարկուող այս տարբերակներից որեւէ մէկով Արցախի ապագային առնչուող որեւէ հարց նոյնիսկ տեսականօրէն չի լուծուած: Երկու մօտելի իրագործման դէպքում հետեւանքը նոյնն է լինելու՝ Լեռնային Ղարաբաղի հայաթափում:

Առաջին հայեացքից միմեանցից տարբերուող այս պատումների տարածումը հաւանաբար նաեւ մէկ այլ նպատակ է հետապնդում: Ատրպեյճանը, որդեգրելով Հակոբ Յաւուզի յօդուածի մօտեցումը որպէս պաշտօնական դիրքորոշում, կարող է ինչ-որ փուլում «մեծահոգաբար» գնալ փոխգիշման եւ համաձայնել Մաքլի-Ալիեւի առաջարկած կամ նմանատիպ մէկ այլ մոտելի, որը, ինչպէս արդէն նշեցինք, որեւէ իրական խնդրի նոյնիսկ տեսական լուծում չի կարող տալ: Այդ առումով ատրպեյճանական ու փրօ-ատրպեյճանական վերոնշեալ եւ այլ փորձագէտները այս փուլում ստանձնել են բարի եւ չար ոստիկանների դերերը:

Առաւել մաքսիմալիստական դիրքորոշումներ ունեցող ատր-

Շաբ.ը էջ 6

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Դատաւորներուն, Դատախազներուն, Քննիչներուն Բարեկարգութիւնը Պիտի Ստուգուի

ՀՀ կառավարութիւնը հաստատեց դատական եւ իրաւական բարեփոխումներու 2022-2026 թուականներու ռազմավարութիւնը եւ անկէ բխող գործողութիւններուն ծրագիրը: Կառավարութեան նիստին ՀՀ արդարադատութեան նախարար Կարէն Անդրէասեան նշեց, որ այն նոր չէ, այլ շարունակութիւնն է 2019 թուականին ընդունուած ռազմավարութեան:



ՀՀ արդարադատութեան նախարար Կարէն Անդրէասեան

«Շատ աշխատանքներ, որոնք ներկայացուած են այս ռազմավարութիւնում, ժառանգուած են նախորդ ռազմավարութիւնից: Դրանք կատարելագործուած են, աւելի են բարելաւուած: Որոշ կարեւոր ուղղութիւններ, ցաւօք, չեն իրագործուել համաձայնակով ու պատերազմով պայմանաւորուած: Որոշ ուղղութիւններ գրեթէ պատրաստ են, եւ յառաջիկայ ամիսներին կը կարողանանք իրագործել», ըսաւ Կարէն Անդրէասեանը:

տախազներուն, քննիչներուն, քրէակատարողական համակարգի աշխատակիցներուն եւ շարք մը այլ ոլորտներու ներկայացուցիչներուն համար:

Ներկայացնելով ռազմավարութեան մէջ տեղ գտած դրոյթները՝ Կարէն Անդրէասեան նշեց, որ առաջինը դատական համակարգի բարեփոխումներն են: Կը նախատեսուի հակափտածութիւն դատարաններու ամբողջ շղթայի գործարկումը: Համակարգը գրեթէ ամբողջութեամբ պատրաստ է: Միւս կարեւոր ուղղութիւնը դատական գործընթացներու թուայնացումն է:

Ռազմավարութեան յաջորդ շեշտադրումը Բարձրագոյն դատական խորհուրդին մէջ կարգապահական որոշումներու բողոքարկման հնարաւորութիւնն է, որ օրէնսդրական լուծումներով պիտի ներկայացուի կառավարութեան:

«Յաջորդ կարեւոր խնդիրը բարեկարգութեան ստուգումն է, ու սա միայն դատաւորներին չի վերաբերում: Այսօր միայն նոր համակարգ մտնող դատաւորներին բարեկարգութիւնն է ստուգուած, իսկ ռազմավարութեան յառաջիկայ ամիսներին մենք նախաձեռնելու ենք, որ ստուգուի բոլոր գործող դատաւորներին բարեկարգութիւնը: Սա փտածութեան դէմ լրջագոյն պայքարի միջոց է՝ դառնայ», ըսաւ Կարէն Անդրէասեան՝ ընդգծելով, որ բարեկարգութեան ստուգում կը նախատեսուի նաեւ դատական Յունուար-Յունիսին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցած է 26.9 տոկոսով:

Բարեփոխումներ կը նախատեսուին փաստաբանական ոլորտին մէջ: Նախարարը տեղեկացուց, որ այստեղ բաւականին աշխատանքներ կատարուած են: Մշակուած է օրէնսդրական նախագիծ, աշխատանք տարուած է Փաստաբանական պալատին եւ համայնքին հետ: Կարէն Անդրէասեան ընդգծեց, որ այստեղ կայ համաձայնութիւն:

Հայաստանի Տնտեսական Ցուցանիշը Տարուան Առաջին Կիսամեակին Աճած Է 11.8 Տոկոսով

Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2022 թուականի Յունուար-Յունիսին 11.8 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ: Այս մասին կը փաստեն ՀՀ վիճակագրական կոմիտէին հրապարակած տուեալները:

Կարեւոր ռազմաւակարական ուղղութիւն է վէճերու այլընտրանքային լուծման համակարգը: Նախարարը ընդգծեց, որ այն պիտի բեռնաթափէ դատարանները: Ան վստահութիւն չայտնեց, որ արպիթրաժային կեդրոնի ստեղծումը պիտի լուծէ այդ խնդիրը:

Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը այս տարուան Յունուար-Յունիսին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 5.8 տոկոսով:

2022 թուականի Յունուար-Յունիսին սպառողական գիներու ցուցակը 2021-ի Յունուար-Յունիսի համեմատ աճած է 8.1 տոկոսով, արդիւնաբերական արտադրանքի գիներու ցուցակը՝ 7.8 տոկոսով: Ելեկտրականութեան արտադրութեան ծաւալը Յունուար-Յունիսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 14.8 տոկոսով:

Գիւղատնտեսական համախառն ներքին արտադրանքի ծաւալը այս տարուան առաջին 6 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ նուազած է 5.5 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ այս տարուան առաջին 6 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արձանագրուած է 44 տոկոս աճ: Ընդ որում՝ 2022 թուականի Յունուար-Յունիսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արտահանումը աճած է 36.3 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 48.7 տոկոսով:

Շինարարութեան ծաւալը 2022-ի Յունուար-Յունիսին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 12.7 տոկոսով:

Մարտի փոխարժէքը տոլարի նկատմամբ Յունուար-Յունիս ամիսներուն կազմած է 468.24:

Առեւտուրի շրջանառութեան մէջ 2022-ի առաջին 6 ամսուան մէջ 2021-ի նոյն ժամանակահատուածին նկատմամբ աւելցումը կազմած է 10.7 տոկոս:

Կառավարութիւնը Կ'աշխատի Հայաստանի Մէջ Արբանեակներու Արտադրութիւնը Հիմնելու Ուղղութեամբ

Իր առաջին արբանեակը տիեզերք արձակելէ երկու ամիս անց, Հայաստանի կառավարութիւնը կը յայտարարէ, որ կ'աշխատի երկրին մէջ արբանեակներու արտադրութիւն հիմնելու ուղղութեամբ: «Ազատութեան» հետ գրոյցին ընթացքին այս մասին յայտնած է Բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Խաչատրեանը:



Բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Խաչատրեան

«Հիմնական նպատակը՝ Հայաստանում ունենալ արբանեակների արտադրութիւն, մենք դնում ենք տենց փառատենչ ծրագիրներ եւ պէտք է ձգտենք դրան: Թէ այս փուլում ինչքան կը կարողանանք, որ մասը կը կարողանանք էստեղ անել՝ հիմա կատարուած են գնահատման աշխատանքներ, տարբեր ընկերութիւնների հետ բանակցում ենք, տեսնում ենք՝ ինչ կարողութիւններ կան Հայաստանում, որպէսզի ճիշդ կարողանանք օգտագործել», նշեց նախարարը՝ շարունակելով: «որովհետեւ իրականում Սովետական Միութեան ժամանակաշրջանում նման կարողութիւններ Հայաստանում եղել են, եւ այդ կարողութիւնները, կարելի է ասել, մասամբ պահպանուել են՝ մենք ունենք թէ՛ քաղաքների առումով, լաւ գաղափարներ ունենք էստեղ, մասնագէտներ ունենք, ում գիտելիքները կարելի է շատ լաւ օգտագործել»:

չենք խօսում, մեր արբանեակը կապի արբանեակ չի՝ դա Երկրի հեռահար գոնդաւորման արբանեակ է, եւ հետագայ շարունակութիւնը նոյնպէս էլի մտածում ենք, այս պահին մտածում ենք հեռահար գոնդաւորման արբանեակների ուղղութեամբ»:

Հարցին՝ խօսքը կապի՞ արբանեակներու մասին է, Խաչատրեան բացասական պատասխանեց. «Ոչ, միանգամից ասեմ, որ կապի արբանեակների մասին այս պահին»:

Նախարարին փոխանցմամբ՝ Հայաստանի մէջ արբանեակներու արտադրութեան գործին մէջ այս պահուն որպէս հիմնական գործընկեր կը բանակցին սպանական Satlantis-ի հետ: Նոյնինքն այս ընկերութեան հետ համագործակցելով Հայաստանի կառավարութիւնը այս Մայիսին տիեզերք արձակեց «ArmSat-1» արբանեակը:

3 Միլիարդ 107 Միլիոն՝ Պարեկային Ծառայութեան Ինքնաշարժներուն Համար



Հայաստանի չորս մարզի մէջ Ոստիկանութեան պարեկային ծառայութիւններ ստեղծելու համար կառավարութիւնը 3 միլիարդ 107 միլիոն դրամ յատկացուց՝ «Թոյթա Երեւան» ընկերութեանէն 175 ինքնաշարժ գնելու համար, գնման ընթացակարգը՝ մէկ անձէ է, առանց մրցոյթի:

ենք, թէ ինչո՞ւ է մեր տեխնիկական առաջադրանքի մէջ գրած մեքենայի երկարութիւնը այսքան եւ ոչ թէ 5 սմ դրանից պակաս», ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Կարեւոր համարեցի թափանցիկութեան սկզբունքների շրջանակում մենք գեկուցենք ու մանրամասն ներկայացնենք՝ ինչի մասին է խօսքը: Ընդ որում՝ Ոստիկանութեան Բարեփոխումների Խորհրդում էլ քննարկել ենք նաեւ այդ հարցը, թէ ինչու ենք մենք էս փարամէթրի մեքենայ ընտրում եւ ոչ թէ մէկ ուրիշ փարամէթրի մեքենայ ընտրում: Ընդհուպ քննարկել»:

Ոստիկանութիւնը ինքնաշարժները ձեռք կը բերէ գնում կատարելով մէկ անձէ, ոստիկանապետը կ'ըսէ՝ մրցոյթ չայտարարած էին Յունիսին, ունէ մէկը չէ դիմած, ապա իրենք հարցումներ ըրին հանրայայտ ինքնաշարժի ապրանքանիշներու հայաստանեան ներկայացուցիչներուն, պարզեցին, որ միայն «Թոյթա»-ն կրնայ մատակարարել անհրաժեշտ չափորոշիչներով ինքնաշարժներ, պարզ չէ, սակայն,

ԼՈՒՐԵՐ

Եւրոխորհրդարանը Կը Կարելորէ Հայ Գերիներու Վերադարձի Ապահովումը



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի կը հանդիպի Եւրոպական Խորհրդարանի պատուիրակութեան հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Եւրոպական Խորհրդարանի Արտաքին Հարցերով Կոմիտէի (AFET) նախագահ Տէյվիտ Մքալիսթերի գլխավորած պատուիրակութիւնը:

Վարչապետը կարեւորած է Եւրոպական Խորհրդարանին հետ սերտ համագործակցութիւնը եւ նշած, որ Եւրոպական Միութիւնը կը հանդիսանայ Հայաստանի ժողովրդավարական օրակարգի արդիւնաւէտ իրականացման կարեւորագոյն գործընկերներէն մէկը:

Կառավարութեան ղեկավարը ընդգծած է Արեւելեան Գործընկերութեան շրջանակին մէջ փոխգործակցութիւնը եւ նշած, որ Հայաստանը փտածութեան դէմ պայքարի, խօսքի ազատութեան, ընտրական բարեփոխումներու եւ այլ ուղղութիւններով Արեւելեան Գործընկերութեան շրջանակին մէջ կը զբաղեցնէ առաջատար դիրքեր:

Տէյվիտ Մքալիսթեր շնորհակալութիւն յայտնած է Չերմ ընդունելութեան համար եւ նշած՝ հայ խորհրդարանականներու հետ արդիւնաւէտ ու սերտ համագործակցութեան փաստը: Եւրոպական Խորհրդարանի Արտաքին Հարցերով Կոմիտէի նախագահը ողջունած է Հայաստանի մէջ տարբեր ոլորտներու մէջ իրականացուող ժողովրդավարական բարեփոխումները՝ չափելով, որ Եւրոպական Միութիւնը պիտի շարունակէ օժանդակութիւնը ՀՀ կառավարութեան այլ ուղղութեամբ:

Զրուցակիցները անդրադարձած են Հարաւային Կովկասի տարածքին իրականացումը:

Րաժաշրջանին մէջ տեղի ունեցող գործընթացներուն, Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակին, տարածաշրջանային ենթակառուցումներու ապաշրջափակման, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման հնարաւորութիւններուն: Վարչապետ Փաշինեան մանրամասն ներկայացուցած է հայկական կողմին դիրքորոշումները վերոնշեալ ուղղութեամբ եւ պատասխանած է ԵՄ պատուիրակութեան հարցումներուն:

Զրուցակիցները կարեւորած են տարածաշրջանային խաղաղութեան եւ կայունութեան ապահովումը, այդ ուղղութեամբ երկխօսութեան շարունակականութիւնը:

Նիկոլ Փաշինեան անդրադարձած է մինչ օրս Ատրպէյճանի մէջ պահուող հայ ռազմագերիներու խնդիրին, որուն առնչութեամբ Տէյվիտ Մքալիսթերը նշած է, որ Եւրոպական Խորհրդարանը եւս կը կարեւորէ Ատրպէյճանի կողմէ անոնց վերադարձին ապահովումը եւ պիտի շարունակէ ջանքերը այդ ուղղութեամբ:

Քննարկուած են նաեւ ատրպէյճանական վերահսկողութեան տակ անցած տարածքներուն մէջ հայկական մշակութային ժառանգութեան պահպանութեան վերաբերող հարցեր:

Նիկոլ Փաշինեան եւ Տէյվիտ Մքալիսթեր շեշտած են ԼՂ հակամարտութեան գօտի ԵՌԻՆՍՄՔՕ-ի առաքելութեան մուտքի ապահովման անհրաժեշտութիւնը ու այդ նպատակով հետեւողական աշխատանքի իրականացումը:

Մուրատ Փափագեանի Հայաստան Մուտքը Արգիլելու Հիմքերուն Մասին

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը պարզաբանած է, թէ ինչ հիմքով Յուլիս 13-ին արգիլուած է ՀՅԴ բիւրոյի անդամ, Մուրատ Փափագեանի մուտքը Հայաստանի Հանրապետութիւն:

«Արմենիա»-ի հարցման ի պատասխան, վարչապետի աշխատակազմէն յայտնած են. «Նշուած անձի մուտքը Հայաստանի Հանրապետութիւն արգիլուել է՝ հիմք ընդունելով «օտարերկրացիների մասին ՀՀ օրէնքի 8-րդ յօդուածի «գ» եւ «զ» կէտերը:

Տուեալ անձը հանդիսանում է նախորդ տարուայ Յունիսի 1-ին

Ֆրանսայում ՀՀ դեսպանութեան մօտ վարչապետի գլխավորած կառավարական պատուիրակութեան՝ ՀՀ պետական դրօշակիր ինքնաշարժի շարասիւնի դէմ յարձակում կազմակերպած անձանցից մէկը:

Շարասիւնի ուղղութեամբ նետուել են տարբեր իրեր, առարկաներ: Վարչապետի ՀՀ պետական դրօշակիր ինքնաշարժը ենթարկուել է յարձակման եւ ստեղծուած իրավիճակը յաղթահարուել է միայն ֆրանսական ոստիկանութեան եւ անվտանգութեան ուժերի ջանքերի արդիւնքում:

Այդ մասին վկայող տուեալներ իրապարկուել են տարբեր լրատուամիջոցների կողմից, իսկ տեսանիւթերն առկայ են»:

Անգարան Տակաւին Յստակ Քայլեր Չէ Տեսած Երեւանի Կողմէ. Չաւուշօղլու

Անգարան տակաւին Երեւանի կողմէ յստակ քայլեր չէ տեսած: Այս մասին ըսած է Թուրքիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան ղեկավար Մեւլութ Չաւուշօղլուն՝ խօսելով հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մասին:

Յիշեցնելով բանակցութիւններուն եւ Ատրպէյճանի ու Հայաստանի միջեւ պայմանաւորուածութիւններուն մասին՝ Չաւուշօղլուն ընդգծած է, որ «միջին միջանցքը» նոյնպէս նշանակութիւն ձեռք բերած է, քանի որ ռուս-ուքրանական պատերազմը սկսելով ապրանքները չեն կրցած հասնիլ Արեւմուտք Ռուսիայով: Չաւուշօղլուն ըսած է, որ Անգարայի եւ Պաքուի մտադրութիւնները «անկեղծ» են: «Մենք կը փափաքինք գործով տեսնել, թէ որքանով անկեղծ է Հայաստանը: Առայժմ կան տեղեկութիւններ եւ յայտարարութիւններ: Կայ նաեւ ճնշում, այդ ճիշդ է: Սփիւռքը դուրսէն, ծայրայեղականներու խումբը՝ ներսէն: Մենք կը փափաքինք տեսնել, թէ որքանով անկեղծ է Հայաստանը: Մենք այդ յստակ քայլերը տակաւին չենք տեսած: Այլ նախագիծերու մէջ, այդ շարքին Չանգեզուրի նախագիծին կամ համապարփակ խաղաղութեան համաձայնագրին մէջ...»



Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարար Մեւլութ Չաւուշօղլու

Հայաստանի իշխանութիւնները, Նիկոլ Փաշինեանի կառավարութիւնը պէտք է դրական քայլերու ձեռնարկեն այս հարցերուն մէջ խաղաղութեան համար: Խօսքերը բաւարար չեն»:

Ան նաեւ ընդգծած է, որ Անգարան կ'իրականացնէ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթաց Ատրպէյճանի հետ համակարգմամբ: «Մենք կը սպասենք Հայաստանէն յստակ քայլեր այս առումով»:

Թուրք Բանագնաց՝ Սերտար Քըլըճ Այցելած Է Հայ-Թրքական Սահման



Անգարայի յատուկ ներկայացուցիչ Սերտար Քըլըճ Հայաստանի հետ սահման այցելած ժամանակ

Հայ-թրքական ցամաքային սահմանը այլ երկիրներու քաղաքացիներու համար բանալու շուրջ Երեւանի եւ Անգարայի միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութեան մօտ մէկ ամիս անց Թուրքիոյ բանագնացը ժամանած է սահմանամերձ շրջաններ:

Հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման առնչութեամբ Անգարայի յատուկ ներկայացուցիչ Սերտար Քըլըճ Հայաստանի հետ սահման այցելած է նախօրէին: Կարսի մէջ լոյս տեսնող «Gazete Kars» պարբերականին տեղեկութիւններով՝ Քըլըճ նախ ժամանած է Կարս, ուր այցելած է Ռազմական պատմութեան թանգարան: Դիւանագէտը ապա ուղեւորուած է հայ-թրքական սահման՝ այցելելով Անիի աւերակները եւ Հայաստանի հետ սահմանին գտնուող «Տողուքափը» անցակէտ:

Թրքական թերթին մէջ հրատարակուած լուսանկարներէն կարելի է ենթադրել, որ այցելութեան ընթացքին Քըլըճ հանդի-

պած է նաեւ սահմանամերձ գիւղերու բնակիչներու հետ:

Հայաստանի եւ Թուրքիոյ բանագնացներու վերջին հանդիպման ընթացքին կողմերը պայմանաւորուած են բանալ ցամաքային սահմանը այլ երկիրներու քաղաքացիներու համար, ինչպէս նաեւ հնարաւորութիւն տալ երկու երկիրներու միջեւ իրականացնելու ուղիղ օդային բեռնափոխադրումներ: Կողմերը չեն պարզաբանած պայմանաւորուածութիւններու կատարման համար նշուող ամենամեծ ժամկէտները, եւ թէ ինչու սահմանը կը բացուի միայն երրորդ երկիրներու քաղաքացիներու համար: Թուրքիոյ եւ Հայաստանի առաջնորդները միայն յոյս չայտնած են, որ այդ պայմանաւորուածութիւնները շուտ կեանքի կը կոչուին: Այս մասին կ'ըսուի Վիեննայի հանդիպման յաջորդած՝ Ռեճեպ Թայյպ էրտողանի եւ Նիկոլ Փաշինեանի հեռախօսազրոյցին վերաբերեալ կողմերուն տարածած հաղորդագրութեան մէջ:

«CNN»-ը Աշխարհի Լաւագոյն Արշաւային Ուղղութիւններուն Մէջ Ներառած Է Հայաստանը



Ամերիկեան հեղինակաւոր «CNN»-ը իր ճանապարհորդական շարքի շրջանակին մէջ առանձնացուցած է աշխարհի լաւագոյն արշաւային ուղղութիւններէն՝ արահետներէն 23-ը՝ ցանկին մէջ ներառելով նաեւ Հայաստանը:

Հայաստանին վերաբերող հատուածը վերնագրուած է «Հայաստանը եւ Մետաքսի ճանապարհը»:


Կ'ընդգծուի, որ Հայաստանի մէջ են Եւրոպայի մէջ լաւագոյն արահետներէն քանի մը հատը:

«Հայաստանն ու Մետաքսի ճանապարհը» 11-օրեայ ճանապարհորդութիւնը կ'անցընէ լաւագոյն

երթուղիներով՝ միացնելով ԵՈՒՆԵՍԿՕ-ի պահպանութեան տակ գտնուող Սանահին եւ Հաղպատ վանքերը, անցնելով կրաքարային լեռնազագագթներով եւ սաղարթախիտ անտառներով՝ Գեղամայ վայրի լեռներուն մէջ՝ քայլարշաւի, եւ երկրի ամենաբարձր լեռը՝ Արագածի գագաթը բարձրանալու հնարաւորութեամբ», կ'ըսուի յօդուածին մէջ:

Յանկին մէջ ընդգրկուած են նաեւ ուղղութիւններ Միացեալ Թագաւորութեան, Սպանիոյ, Միացեալ Նահանգներու, Արժանթինի, Մարոքի եւ այլ երկրներու մէջ:

«Mitsubishi Heavy Industries Russia» Ընկերութիւնը Կը Փափաքի Գործունէութիւն Ծաւալել Հայաստանի մէջ



ՀՀ բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Խաչատրեան ընդունած է «Էմ Էյլ Այ Ռուս» (Mitsubishi Heavy Industries Russia) ընկերութեան պատուիրակութիւնը՝ գլխաւոր տնօրէն Եասուչի Քաքիթսուքայի գլխաւորութեամբ:

Ռոպերթ Խաչատրեանը հիւրերուն ներկայացուցած Հայաստանի բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան ոլորտի ներկայ վիճակը, զարգացումներն ու մարտահրաւէրները, մասնաւորապէս Հնարաւոր Համագործակցութեան ուղիները:

Եասուչի Քաքիթսուքայի իր հերթին մանրամասնած է ընկերութեան գործունէութեան ուղղութիւններն ու ոլորտները, նախանշած է փոխգործակցութեան հնարաւոր սենարները:

Հանդիպման ընթացքին քննարկուած են երկկողմ հետաքրքրութիւն ներկայացնող շարք մը հարցեր: Կողմերը ընդգծած են, որ Համագործակցութիւնը կրնայ լուրջ կամուրջ հանդիսանալ նոր առեւտրային կապերու ձեւաւորման եւ գործունէութեան ծաւալման համար: Կարծիքներ փոխանակուած են նաեւ արհեստագիտական ընկերութիւններու հետ հանդիպումներ կազմակերպելու, ծրագրերու շուրջ քննարկումներ կայացնելու հնարաւորութիւններուն վերաբերեալ:

«Էմ Էյլ Այ Ռուս» (Mitsubishi Heavy Industries Russia) ընկերութիւնը մտադիր է Հայաստանի կառավարութեան հետ գործակցութեան ուղիներ նախանշել, որոնց յստակացումէն յետոյ անմիջապէս գործունէութիւն ծաւալել Հայաստանի մէջ:

Հայաստան Եւ Ֆրանսա Կը Պատրաստուին Շարլ Ազնաւուրի 100-Ամեակին

ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեան ընդունած է «Ազնաւուր» հիմնադրամի տնօրէն առաջարկած է բոլոր միջոցառումները կայացնել Ֆրանսայի հետ զուգահեռ, այդ շարքին՝ արձանի տեղադրումը:

ԿԳՄՄ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեան ողջունած է հիւրերը եւ ուրախութեամբ փաստած է, որ Հայաստանեան կողմը սիրով պիտի համագործակցի հիմնադրամին հետ միջոցառումներու ծրագիրը իրականացնելով, եւ աշխարհահռչակ շանսոնյէին յոբելեանը Հայաստանի մէջ պիտի նշուի նոյնքան վառ, որքան Ֆրանսայի մէջ:

«Մենք պատասխանատու ենք, որ հայ-ֆրանսական օրակարգը որեւէ հարցում չտուժի», ըսած է Արթուր Մարտիրոսեանը:

Քննարկման ընթացքին կողմերը որոշած են յոբելեանի շրջանակին մէջ ստեղծել միջգերատեսչական յանձնաժողով՝ համակարգելու յոբելեանական միջոցառումները:

Ազորինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով կ'անցնին նաեւ 2018-ի յեղափոխութեան յետոյ պետական պաշտօններու նշանակուած շարք մը անձեր, տեղեկացուց այդ գործերով զբաղող դատախազ Գէորգ Քոչարեանը:

Ան, սակայն չմանրամասնեց, թէ գործող իշխանութեան քանի անդամ յայտնուած է իրաւապահներու ուշադրութեան կեդրոնին եւ ովքեր են անոնք, միայն յաւելեց, որ անոնց գոյքի եւ եկամուտներու ձեռքբերման օրինականութիւնը այժմ կը ստուգուի:

«Մեր օրէնքում նշուած է յստակ շրջանակը յանցագործութիւնների, որոնց դէպքում կարող է վարույթ սկսուել, որոնք կարող են հիմք հանդիսանալ վարույթ սկսելու համար: Եթէ նայէք վերջին տարիների քրէական գործերով ովքեր են անցել, այդ թուում նաեւ նոր իշխանութիւնների մաս կազմող կամ երբեւէ մաս կազմած անձանց վերաբերեալ գործերը եւ համադրելով, թէ ինչ քրէական գործեր են... գուշակութեան մասին խօսք չի գնում, գրեթէ որոշակիանում է, այսինքն ինչ յօդուածներով, ինչ յանցագործութեան համար է մեղադրանք առաջադրուած, դա արդէն դուք ձեզ համար այդ հարցերին կարող էք պատասխանել», ըսաւ Գէորգ Քոչարեանը:

Երկու տարուան ընթացքին Դատախազութիւնը դատարան ուղարկած է ազորինի գոյքի բռնագանձման 12 հայց, որոնցում բռնագանձման ենթակայ են շուրջ 200 անշարժ եւ շարժական գոյք, ինչպէս նաեւ մօտ 21 միլիոն դրամ չափով գումար: Անոնք, սակայն, կ'առնուին նախկին իշխանութեան ներկայացուցիչներուն: Ընդհանուր առմամբ Դատախազութիւնը կ'ուսումնասիրէ 330 գործ:

Դատախազ Քոչարեանի տուեալներով, 2020 թուականի Սեպտեմբերէն ի վեր 213 միջնորդու-

Ազորինի Ծագում Ունեցող Գոյքի Բռնագանձման Գործերով Կան Նաեւ 2018-Էն Յետոյ Պետական Պաշտօններու Նշանակուած Շարք Մը Անձեր



Ազորինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով դատախազ Գէորգ Քոչարեան

Թիւն ներկայացուած է դատարան՝ դրամատնային, ապահովագրական եւ այլ գաղտնիք կազմող տեղեկութիւններ ստանալու, ինչպէս նաեւ բռնագանձման ենթակայ գոյքը արգելանքի տակ դնելու պահանջով: Այդ 213 միջնորդութիւններուն մեծ մասը՝ 185-ը, դատարանները բաւարարած են:

«25 գործով հայցի նախնական ապահովումներ է կիրառուել, այսինքն դրանք գրեթէ վերջնական փուլում ամբողջութեամբ ուսումնասիրուած, մեր օրէնքը թոյլ է տալիս, որ հայցի նախնական ապահովում կիրառուի, այսինքն՝ սառեցուցի, արգելադրուի այն ենթադրեալ ազորինի գոյքը, որը հետագայում ակնկալուած է հայցապահանջով մտնել դատարան եւ բռնագանձել: Այդ 25 նախնական ապահովումներով արգելանք է դրուել շուրջ 260 անշարժ ու շարժական գոյքերի վրայ, 53 իրաւաբանական անձանց մասնակցութիւնների վրայ, ինչպէս նաեւ աւելի քան 42 միլիոն դրամի չափով դրամական միջոցների դրամական պահանջով», ներկայացուց դատախազը:

Որո՞ւ եւ Ի՞նչի՞ Ոգեւորութիւնը

ԲԱԳՐԱՏ ԷՍՂՈՒԳԵԱՆ

«Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայքայ Էրտողանի հետ:

Երկու երկիրներու ղեկավարները ընդգծած են հայթրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին կարեւորութիւնը, ինչ որ պիտի նպաստէ նաեւ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման, շնորհաւորած են միմեանց Ատհալի եւ Վարդավառի տօներուն առթիւ:

Փաշինեան եւ Էրտողան տեղի ունեցած հեռավար զրոյցին մէջ ակնկալիք յայտնած են, որ Յուլիս 1ին իրենց երկիրներու յատուկ ներկայացուցիչներու հանդիպման ժամանակ ձեռք բերուած պայմանաւորութեան երկու հարեւան երկիրներու սահմանը բանալ երրորդ երկիրներու քաղաքացիներու համար, ինչպէս նաեւ Թուրքիա-Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ բեռնափոխադրումներ իրականացնել օդային ճանապարհով:

Յիշենք որ Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը փակ է 1993 թուականէն այս կողմ»:

Այսպէս ներկայացուցեալ Թուրքիոյ վերջին 20 տարիներու քաղաքական եւ յատկապէս ալ միջգագային յարաբերութիւններու ուղղութիւն տուող նախագահ Էրտողանի եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի թէկուզ հեռաձայնով առաջին երկխօսութիւնը:

Ինչպէս ծանօթ է երկու երկիրներու միջեւ միջպետական յարաբերութիւններ գոյութիւն չ'ունին: Պատճառը Թուրքիոյ Հանրապետութեան Հայաստանի հանդէպ պատմական մեր ժողովանութիւնն է:

Հայաստան մօտ 70 տարիներ իբրեւ Խորհրդային Միութեան 15 հանրապետութիւններէն մէկը, ուղղակի շփում էր ունեցած հարեւան երկրի հետ:

Այս պահուն կ'ապրինք երկու երկիրներու միջեւ յարաբերու-

թիւններու բնականոնացման միտող գործընթաց մը: Ըստ երեւոյթի այդ գործընթացը ետին թողած չորս հանդիպումներէն ետք տակաւին շատ հեռու է հական յառաջընթաց մը ներկայացնելէ:

Վիեննայի 1 Յուլիսեան չորրորդ հանդիպումէն ետք արտասանուած որոշումները նշանակութիւն մը չ'ունին, քանի որ ցամաքային սահմանը փակ է երկու երկիրներու քաղաքացիներուն համար եւ Թոյլ տրուած ապրանքներու օդային փոխադրութիւնը սնամէջ է, քանի որ Թուրքիա ցարդ է վերացուցած Հայաստանի հանդէպ տնտեսական շրջափակումը:

Յօդուածի սկիզբին տեղադրուած մէջբերման մէջ կը կարդանք թէ Փաշինեան շնորհաւորած է մահմետականներու զօհ մատուցման տօնը, իսկ Էրտողան փոխադարձաբար մօտալուստ Վարդավառը:

Չաւեշուայի է այս հեռախօսահանդիպման պոլսահայ որոշ շրջանակներու մէջ պատճառած ոգեւորութիւնը:

Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի հոգաբարձութեան ատենապետը եւ իր անձամբ գլխաւորած Հայկական Հիմնարկներու Հարթակը անշատաբար պոլսահայ մամուլին մէջ տուած յայտարարութիւններով ողջունեցին այս զարգացումը:

Նման բնոյթի ելոյթով մը արտայայտուեցաւ նաեւ Սահակ Բ. Պատրիարք Սրբազանը:

Կասկած չկայ թէ աշխարհասփիւռ հայութեան մէջ պոլսահայութիւնը ամենամեծ ոգեւորութեամբ պիտի ողջունէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ բնականոն յարաբերութիւններու հաստատումը: Սակայն պարտինք տեսնել թէ տակաւին շատ հեռու ենք այդ հանգրուանէն:

Այս պահուն գոյացած ոգեւորութիւնը հեռու է նաեւ պոլսահայ հասարակութեան զգացումները ցուցնելէ, երբ ան մեծ ուշադրութեամբ կը հետեւի Ալիեւի սպառնալիքներուն եւ Զանգեզուրի միջանցքի մը մասին յամառ պահանջներուն: Ուրեմն արտայայտուած գոհունակութիւնը կը միտի Թուրքիոյ գործող իշխանութիւնը փայտախելու:

«ԱԿՕՍ»

Ատրպէյճանի «Բարի» եւ «Չար» «Ոստիկանները»

Շարունակուած էջ 2-էն

պէյճանական փորձագէտների ֆոնին պարբերաբար ի յայտ են գալիս իբր աւելի կառուցողական մօտեցումներ ունեցող դէմքեր, որոնք գովասանքի են արժանանում նաեւ միջազգային փորձագիտական շրջանակների կողմից:

Այսպէս, Մաքրիլ-Ալիեւի յօդուածի հրատարակումից չետոյ բրիտանացի յայտնի հետազօտող Թոմաս դէ Վաալը, որը վերջին շրջանում արդէն ակնյայտօրէն հանդէս է գալիս փրօտարպէյճանական դիրքերից, թուրքերեան իր էջում գովեստի խօսքեր է գրել ատրպէյճանցի փորձագէտի հասցէին:

Սա Լեւնային Ղարաբաղի ապագայի վերաբերեալ խօսույթների վերահսկման ակնյայտ փորձ է Ատրպէյճանի կողմից: Քարոզչական այս հնարքներին

դիմադրելու համար Հայաստանի Հանրապետութիւնն ու հայկական փորձագիտական շրջանակները պէտք է ի սկզբանէ պոյքոթեն բոլոր քննարկումները առաջարկուող այն տարբերակների շուրջ, որոնք չեն ենթադրում Լեւնային Ղարաբաղում մշտական խաղաղապահ առաքելութեան ու ինքնապաշտպանական ուժերի առկայութիւն:

Ատրպէյճանը, գեներացնելով վերոնշեալ պատումները, փորձում է կեղծ երկրնտրանքի պատկեր ստեղծել դարաբաղեան համատեքստում: Քարոզչական այս ջանքերին դիմադրելու համար հայկական կողմը պէտք է նաեւ աւելի պրոակտիւ քաղաքականութիւն վարի՝ պարբերաբար հանդէս գալով հարցի հանգուցալուծման սեփական իրատեսական տարբերակներով:

«ՍԻՎԻՆԵԹ»

Կը Շարունակեն Հարստանալ

Շարունակուած էջ 1-էն

Ինքնաշարժներու համար, սակայն ոչ մէկ ընկերութիւն չէ մասնակցած մրցոյթին: Միայն վերջերս «Թոյոթա Երեւան» ընկերութիւնը իմացուցած է որ, տարբեր նաւահանգիստներու մէջ կրցած է գտնել պահանջուած յատկութիւնները ունեցող ինքնաշարժներ եւ կրնայ մատակարարել, եթէ գնումը կատարուի շուտ: Կառավարութիւնը ստիպուած համաձայնած է «Թոյոթա Երեւան»-ի հետ, այլապէս պարեկային ծառայութեան աւել քան 600 աշխատակիցներ պիտի

չկրնային աշխատանքի անցնիլ:

Այս բոլորը մեզ կը հասցնեն հոն, որ նախկին համակարգի օրով երկրի խոշոր ու շահաբեր ընկերութիւնները դարձած էին նախկին իշխող խաւի մենաշնորհը եւ տակաւին կը շարունակեն մնալ այդպիսին: Քոչարեանը պէտք է շնորհակալ ըլլայ, որ կ'ապրի Թաւշեայ Յեղափոխութեան Հայաստանին մէջ: Այլապէս, իր ընկերութիւնները շատոնց խլուած պիտի ըլլային իր ձեռքէն ու յանձնուած՝ իշխանութեան շրջապատի մարդոց, ինչպէս որ կ'ընեն ինք ժամանակին:

Գ.ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Հայաստանի Ու Ատրպէյճանի Միջեւ

Շարունակուած էջ 1-էն

գործընկերներու հետ»:

Վարչապետ Փաշինեանի հետ զրոյցին Պլինքըն նաեւ ողջունած է զայն՝ Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորման ուղղութեամբ ձեռք բերուած յստակ համաձայնութիւններու առիթով, իսկ Ատրպէյճանի նախագահին կոչ ըրած է ազատ արձակելու «բոլոր մնացեալ հայ ձեռքակալուածները»:

Հայաստանի կառավարութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, վարչապետ Փաշինեան վերահաստատած է խաղաղութեան օրակարգին իր նուիրուածութիւնը:

Հնդկական Մամուլի Համաձայն

Շարունակուած էջ 1-էն

րիքները: Պարբերականը կը նկատէ, որ պատերազմը ցոյց տուաւ, թէ ռուսական ռազմական սպառազինութիւնը որքան անօգուտ է թրքական սպառազինութեան, յատկապէս Bayraktar անօդաչուներուն դէմ:

«Ազատութիւն»ը դիմած է Հայաստանի ռազմական գերատեսչութիւն՝ վերոյիշեալ հարցերուն պատասխանը ստանալու համար: Դեռ չեն արձագանգած:

44-օրեայ պատերազմէն չետոյ նկատելիօրէն աշխուժացած հայ-հնդկական յարաբերութիւններուն մէջ ռազմական համագործակցութեան մասին սկսան հրապարակաւ խօսիլ այս ամիս: Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան Յուլիսի սկիզբը հիւրընկալած էր Հնդկաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան Արեւմտեան ուղ-

ղութեան քարտուղար Սանճայ Վերմանը, որ Երեւանի մէջ յայտարարեց, թէ պաշտպանութեան ոլորտին մէջ կողմերը հակուած են երկարաժամկէտ համագործակցութեան:

«Պաշտպանութեան ոլորտին մէջ սկսած ենք փնտռել յստակ համագործակցութեան ուղիներ: Այս ոլորտին մէջ երկարատեւ համագործակցութեան ուղիներ կը փնտռենք: Առեւտուրի ու տնտեսութեան բնագաւառին մէջ արտադրութիւններու որոշակիացման գործընթաց մեկնարկած ենք, ուր կրնանք յառաջ երթալ: Երկկողմ ներդրումներու պակաս կայ: Իմ, մեր կառավարութեան պարտականութիւնն է քաջալերել հնդկական արդիւնաբերութիւնը, գործարարները՝ Հայաստանի մէջ ներդրումներ կատարել, որովհետեւ հնարաւորութիւնները, ներուժը մեծ են», նշած է Սանճայ Վերմանը:

Պարեկային Ծառայութեան Ինքնաշարժեր

Շարունակուած էջ 3-էն

թէ յայտարարուած մրցոյթին աւելի առաջ «Թոյոթա»ն ինչու չէր դիմած:

«Բանակցութիւնների արդիւնքում ձեռք բերուած փոխհամաձայնութեամբ նախատեսուած է մատակարարել «Թոյոթա» մակնիշի 45 միաւոր մեխանիկական փոխանցման տուփով, 15 միլիոն 900 հազար դրամով եւ 130 միաւոր աւտոմատ փոխանցման տուփով փոխադրական միջոց 18 միլիոն 400 հազար դրամ գնման

գումարով», ներկայացուց ոստիկանապետը:

Ոստիկանութեան ինքնաշարժներ վաճառող «Թոյոթա Երեւան» ընկերութիւնը Հայաստանի մէջ արձանագրուած է 2006 թուականէն, ըստ Պետական արձանագրութեան տուեալներուն, այն կը պատկանի 2-րդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի որդւոյն՝ Սեդրակ Քոչարեանին եւ ընդդիմադիր Քոչարեանի մտերիմ համարուող, այժմ հետախուզման մէջ գտնուող գործարար Սամուէլ Մայրապետեանին:

Երկամեայ Դադարէ Յետոյ Պիտի Վերագործարկուի «Ներուժ» Ծրագիրը



Երկամեայ դադարէ յետոյ «Ներուժ» սփիւռքի արհեստագիտական սթարթափներուն աջակցող պետական ծրագիրը կը վերադառնայ: ՀՀ բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Սաչատրեան նշեց, որ ծրագրին նպատակն է խթանել մասնա գիտական հայրենադարձութիւնը, ինչ որ պիտի նպաստէ Հայաստանի տնտեսական առաջընթացին ու սթարթափ էքոհամակարգի զարգացման:

«Ներուժ»-ը այն ծրագիրն է, որ կը կամրջէ Հայաստանի եւ սփիւռքի նորարարական միտքը՝ դառնալով Հայաստանի ապագային միտուած նախագիծերու հնարաւորութեան կարեւոր անկիւնքարը: Ծրագիրը լաւ հնարաւորութիւն է աշխարհի տարբեր անկիւններու մէջ ապրող մեր հայրենակիցներուն համար վերադառնալու հայրենիք, այստեղ առեւտուր հիմնելու, ապրելու եւ ներդրում ունենալու Հայաստանի յառաջընթացի գործին մէջ», նշեց ան:

«Ներուժ 3.0»-ը տեղի պիտի ունենայ 26-30 Սեպտեմբերին, Դիլիջանի մէջ: Կը նախատեսուի աշխարհի տարբեր անկիւններէ Հայաստանի մէջ հիւրընկալել շուրջ 30 սթարթափներու 60 ներկայացուցիչներ: Սփիւռքի արհեստագիտական սթարթափներու ծրագիրը պիտի իրականացուի «Իմ քայլը» հիմնադրամին հետ գործակցութեամբ: Նոր կայքը գործարկուած է, յայտերը կ'ընդունուին 25 Յունիսին մինչեւ 22 Օգոստոս:

«Իմ քայլը» հիմնադրամի

Ֆրանսահայ Վիրաբոյժը Հայաստան Կը Գտնուի Նոր Ծրագրերով

Հայաստանի կը գտնուի Փարիզի Եւրոպական Ժորժ Փոմփիտու հիւանդանոցի սիրտանոթային վիրաբոյժ, ֆրանսական «Լոյս» միութեան նախագահ Լեւոն խաչատրեանը:

Ֆրանսական «Լոյս» միութիւնը ձեւաւորուած է 2020 թուականի 44-օրեայ պատերազմի օրերուն, պաշտօնապէս սկսած է գործել 2021 թուականէն: Պատերազմի օրերուն եւ անկէ յետոյ Լեւոն խաչատրեանը ֆրանսացի բժիշկներու ուղեկցութեամբ պարբերաբար կ'այցելէ Հայաստան ու Արցախ՝ կատարելով փորձի փոխանակում ու բարձր վիրահատութիւններ: Օրերս դարձեալ բժիշկներու խումբով այցելած են Արցախ, ուր

տնօրէն Միխայիլ Հայրապետեանը լիալոյս է, որ համատեղ ջանքերով ծրագիրը պիտի լաւարկուի: Ան վստահեցրեց, որ հիմնադրամը չափազանց կը կարեւորէ Հայաստանի մէջ սփիւռքի համահայկական մարդկային դրամագլուխի կեդրոնացումը:

Ծրագրին կրնան մասնակցիլ այն սթարթափները, որոնց հիմնադիրներու կամ համահիմնադիրներու առնուազն կէսը սփիւռքահայեր են: Նախքան ծրագրին դիմելը սթարթափը պէտք է ունենայ կազմաւորուած խմբակ: Լաւագոյն գաղափարները պիտի արժանանան դրամաշնորհի՝ հնարաւորութիւն տալով մասնակիցներուն՝ զարգացնելու գաղափարն ու վերածելու առեւտրային նախաձեռնութեան: Ծրագրի մրցանակային ֆոնտը 45 միլիոն դրամ է:

«Ենթանպատակներէն ամենակարեւորներէ է՝ ստեղծել միջազգային ընկերութիւններ եւ ապահովել Հայաստանի մէջ արհեստագիտութեան ոլորտին մէջ ներդրումային միջավայրի զարգացումը: Որպէս արդիւնք, մենք կ'ակնկալենք մօտ 10 ընկերութիւն ստեղծել, զարգացնել եւ հանել միջազգային շուկայ», նշեց ՀՀ բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարարի տեղակալ Դաւիթ Սահակեանը:

Ծրագրի կարեւոր նախապայմաններէն է Հայաստանի մէջ սթարթափ արձանագրելը, գործունէութիւն ծաւալելը եւ առնուազն մէկ տարի Հայաստանի մէջ բնակիլը:

բնակչութեան անվճար խորհրդատուութիւն տրամադրած են: Լեւոն խաչատրեան կ'ըսէ, որ տեղի կ'ունենայ ֆրանսական ձեւաչափի ներկրում դէպի հայկական առողջապահական հիմնարկներ:

Հերթական նախաձեռնութիւնը «Լոյս» միութեան աջակցութեամբ կ'իրականացուի Կիւմրիի մէջ, այստեղ կը բացուի ակնաբուժական վիրաբուժութեան զարգացման դըպրոց, որ հմտութիւններ պիտի տայ հայ մասնագէտներուն:

Կիւմրիի մէջ նաեւ սրտաբանական խմբակ պիտի ձեւաւորուի՝ իրականացնելու սրտաբանական միջոցառումներ, որոնք տակաւին լայնօրէն տարածուած չեն Հայաստանի ու յարակից որոշ

Արցախի Եւ Հայաստանի Պետական Միջոցներու Ֆինանսաւորմամբ Վերջին Մէկ Տարուան Մէջ Աւելի Քան 1000 Ընտանիք Ապահովուած Է Բնակարանով



գէյթունցիք այնքան կը մօտենան զօրանոցին, որ անկէ հագիւ քանի մը մեթր հեռաւորութեան վրայ կը տնկեն իրենց դրօշակը:

Նախապէս կ'ենթադրուէր թէ զօրանոցը կարելի պիտի ըլլար գրաւել երկու օրէն, սակայն եղած կատարի դիմադրութիւնը կ'ուշացնէր յաղթանակը, մտահոգութիւն պատճառելով ապստամբներուն, որոնց ծրագիրները կը խանգարուէին:

Երբ այսպէս զօրանոցի գրաւման համար ոգի ի բռին կ'աշխատէին, անդին, քաղաքի մէջ ալ ուրիշ զինուած խումբ մը կառավարչատունը կը պաշարէ եւ կը պահանջէ պաշտօնէութեան անձնատուութիւնը՝ հոն գտնուող 60-ի չափ զինուորներով:

Գայմագամը կը համաձայնի գէյթունցիներու առաջարկին, անձնատուութեան նամակ մը կը գրէ զօրանոցի հրամանատարին եւ կառավարչատան մէջ գտնուող զինամթերքը կ'անցնի հայերուն ձեռքը: Այս նոր յաջողութեամբ զօրացած՝ գէյթունցիք կ'որոշեն այդ գիշերն իսկ, ամէն գնով գրաւել զօրանոցը, հակառակ պարագային՝ այլել գայն, որուն համար քարիւղի անհրաժեշտ պաշարը ապահոված էին: Բայց յաջորդ օրուան առտուն զօրանոցին կրակը կը դադրի եւ ձերմակ դրօշը կը պարզուի:

Զէյթունցիք հասած էին տարիներով երազած անձնատուութեան դրօշին ու հիմա կը մնար գրաւել գայն: Քիչ ետք պատշգամին վրայ կ'երեւի հրամանատարը եւ կը յայտնէ թէ կ'ուզէ խօսիլ հայ ղեկավարներուն հետ: Աղասին կը փութայ զօրանոց եւ կը տեսակցի Թուրք զինուորականներուն հետ՝ անձնատուութեան պայմաններուն շուրջ: Երկար տեսակցելէ յետոյ՝ Աղասին եւ ընկերները անձնատուութիւնը կ'ընդունին հետեւեալ պայմաններով եւ ձեւով:

Ա) Զօրանոցին մէջ գտնուող բոլոր ընտանիքները եւ պաշտօնեաները իրենց գոյքերով՝ անվնաս Մարաշ պիտի դրկուին:

Բ) Զինուորները, գնդապետը եւ գայմագամը Զէյթուն պիտի պահուին, որպէս պատանդներ՝ մինչեւ կռուին վերջը:

Գ) Զօրանոցը իր բոլոր պահեստներով անվթար կերպով պէտք է յանձնուի հայերուն:

1895 Հոկտեմբեր 29-ին Զէյթունի զօրանոցի գրաւման լուրը անմիջապէս կը տարածուի ամէն կողմ: Զօրանոցի անկումը այնքան անսպասելի էր Թուրք կառավարութեան համար եւ այնքան վարկաբեկիչ, որ կատարեալ շփոթութեան կը մատնէ զինուորական եւ քաղաքական շրջանակները:

Դեկտեմբեր 24-ին, թշնամի բանակէն խուճբ մը ձիաւորներ, յանդուգն սպայի մը հրամանատարութեան տակ, կը քալեն Զէյթունի արեւելեան կողմը գտնուող Եգիտէր հայաբնակ գիւղին վրայ: Բայց հոն ապաստանող պողպատի քիչ եւ կարկուրցի հայերէն զօրաւոր դիմադրութեան հանդիպելով պարտուած ետ կը դառնան:

Միւս կողմէ Թուրքեր՝ 5000-ի մօտ զինուորներ, 4 թնդանօթ ներառեալ կը յառաջանան Ս. Փրկիչ վանքին կողմը եւ կը սկսին ռմբակոծել գայն: Հայ մարտիկները երկու անգամ ետ կը մղեն գրոհները: Երրորդ եւ չորրորդ գրոհներուն եւ նոր հասած օգնական ուժերուն շնորհիւ թշնամին կը յաջողի գրաւել Հայոց դիրքերը, որմէ ետք գէյթունցիք հերոսութեամբ, տեղատարափ գնդակներու տակ, կը ճեղքեն պաշարման շղթան եւ կ'ապաստանին Մուրթատար հայ գիւղը:

Յաջորդ օրը հայկական գունդը՝ Սանդուխ կոչուած լեռան արեւելեան կողմը՝ նոր ճակատամարտի կը պատրաստուի: Հայեր կը ցած էին 5000 կռուողներ համախմբել, մինչ 60.000-ի կը հասնէր Թուրք բանակը: Կռիւր կը տեւէ չորս ժամ: Հայերը տեղի տալով թշնամիի գերագանց ուժերուն առջեւ կը սկսին նահանջել:

Դեկտ. 29-ին՝ Մարաշի կառավարիչը տեղացի հայերէն պատուիրակութիւն մը կը կազմէ եւ Աստուածատուր քահանայ Թուրքիանի գլխաւորութեամբ Զէյթուն կը ճամբէ, որպէսզի համոզեն հայերը անձնատուր ըլլալ: Զէյթունցիները գայնք քանի մը օր կը բանտարկեն եւ յետոյ կը ճամբեն Մարաշ, նամակ մը տալով՝ կառավարիչին յանձնելու համար, որուն մէջ Աղասին կ'ըսէր թէ՛ ո՛չ մէկ կերպով կրնան անձնատուութեան առաջարկը ընդունիլ: Մարաշ վերագառնալով կառավարիչի կողմէ կը բանտարկուին պատգամաւորները, որոնք չէին կրցած իրենց առաքելութիւնը կատարել:

Ռէժիմի փաշա կը սկսի յարձակման: Նոյնը կը կատարուի նաեւ արեւմտեան ճակատէն: Երկու կողմէ ահաւոր գրոհ մը կը սկսի Զէյթունի վրայ: Երկուստեք կատարի կռիւ կը մղեն ամբողջ օրը՝ զօրանոցին շուրջը ձգելով դիակներու բլուր մը: Այդ օրուան կռիւին մէջ հայերը կը կորսնցնեն առիւծասիրտ երիտասարդ մը՝ Խաչեր Զօգնեան անունով՝ խորունկ կակիծ պատճառելով ամէնուն: Կռիւր կը շարունակուի ամբողջ օրը եւ Թուրքերը ոչ միայն չեն կրնար իրենց ծրագրին համաձայն Զէյթունը զինուորական հայերուն:

ՁԵՅԹՈՒՆԻ 1895-Ի ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 13-էն

Թունը այրել, այլ նոյնիսկ չեն յաջողիր մօտենալ գորանոցին:

Քանի մը օր անցած, Ձէյթունի ապստամբութեան ղեկավարութիւնը լուր կ'առնեն թէ հեռագիր մը եկած է իր անունով, որ այսպէս խմբագրուած էր: «Ձէյթունի ներկայացուցիչներ, եթէ մեր միջամտութիւնը կ'ընդունիք, պատասխանեցէք, որ զանք միջամտենք»:

Հեռագիրը ուղարկուած էր վեց պետութիւններու ղեկավարներուն կողմէ: Ձէյթունցիք մեծապէս կը խանդավառուին այս լուրին վրայ եւ կը յայտեն իրենց համատարրութիւնը: Ձինադադար մը կը յայտարարուի, որուն ընթացքին սակայն, երկու կողմերը կը պահեն իրենց դիրքերը:

1896 Յունուար 11-ին օտար փոխ-հիւպատոսները Ձէյթուն կը հասնին եւ կը հիւրընկալուին գօրանոցի մօտ գտնուող տան մը մէջ:

Երկու շաբաթ տեւող բանակցութիւններէ ետք, հայ ապստամբներուն եւ օտար պետութեանց ներկայացուցիչներուն միջեւ կը կայանայ համաձայնութիւն մը եւ երկուստեք կը ստորագրուի պայ-

հարկահանները, ժանտարմաները եւ կառավարական պաշտօնեաները պէտք է ընտրուին եւ կազմուին զէյթունցիներէն:

7. Ձէյթունցիները գերծ կը մնան յաւելեալ տուրքեր վճարելու պարտաւորութենէն եւ զալիք վեց տարիներու տուրքերէն:

8. Հաստատուած տուրքերու տարբեր համեմատական դրութեան, իւրաքանչիւրի կարողութեան համեմատ:

9. Ձէյթունցիներու կեանքը, ինչքը, պատիւը եւ կրօնական ազատութիւնը կ'երաշխաւորուին եւ ըրտպական պետութեանց կողմէ:

10. Ձէյթուն ապստամբ բոլոր գիւղացիները, ինչպէս եւ թուրք-իոյ այլ վայրերէն եկած եւ հոն հաւաքուած բոլոր հայ խումբերու եւ անհատներու ապահով եւ անվնաս վերադարձը իրենց տեղերը պիտի կատարուին բանակցող հիւպատոսներու անմիջական հսկողութեան տակ:

11. Զօրանոցէն զէյթունցիներու կողմէ գրաւուած գէնքերու եւ թնդանօթի յանձնուած Օսմանեան կառավարութեան՝ կը ստանձնուին հայ ներկայացուցիչներուն կողմէ, պայմանաւ որ, Ձէյթունի եւ շրջա-

Երկիւղածութեան Տարբերակը Յիսուս Քրիստոսի Արձանի Հանդէպ Երկիւղածութիւն Եւ Սակայն

ԶԱԻԷՆ Ա ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ատենէ մը ի վեր կը կարդանք մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի արձանի կանգնեցման մասին Երեւանի մէջ բարերարութեամբ յայտնի գործարար Գագիկ Ծառուկեանի, երկիւղածութեամբ եւ մասամբ նորին: Առանց կասկածելու բարերարին անկեղծութեան, յիշեցնելով մանաւանդ գեղեցիկ եւ բարձրօրէն գնահատելի հայ եկեղեցւոյ իր կառուցումը Երեւանի կից մի քանի տարիներ առաջ: Այս մէկը թէեւ ամենասուրբ եւ սակայն ու մանաւանդ գլխաւոր թիրախ մը ըլլալու լուրջ մտաւարտութիւնը կ'ընծայէ:

Փրկչին արձանը մայրաքաղաքի բարձունքին իցիւ թէ ժողովուրդին ամբողջական պաշտամունքին եւ հիացումին առարկայ կրնայ դառնալ, նկատի ունենալով միշտ հայերուն հակառակորդ տարրերը որոնք կը սրբապղծեն արդէն մեր եկեղեցիները աջէն ու ձախէն: Իմ մեծագոյն մտախոհութիւնը այն է թէ շուտով կրնանք գոյջալ նման ձեռնարկի մը կատարման որպէս արդիւնք:

Եթէ Փրկչին հոյակապ եւ հովանաւոր արձանը սրբութեամբ պահուի, «Ամէն» պիտի ըսենք, եւ սակայն ո՛վ կրնայ երաշխաւորել այդ ապահովութիւնը: Շուտով կրնանք ակնատես ըլլալ անոր սրբապղծումին որեւէ կերպով, հարուածով մը արձանին ձեռքը կամ գլուխը կտրելով, եւ կամ անարգ ու այլանդակ ներկերով զայն արհամարհելով եւ այն ատեն ինչ պիտի

ըսենք մենք մեզի եւ կամ ինչ պիտի ըսենք: Այս իմ մտահոգութիւնն է, չսակարկել սրբութիւնը հակառակորդին արարքով որուն առաջին պատեհութեամբ թիրախ կրնայ դառնալ Մեծ Սրբութիւնը:

Մի քանի տարիներ առաջ բարերար Գագիկ Ծառուկեան վերոյիշեալ հայաստանեայց եկեղեցին կառուցանելով պատուեց գլխաւորապէս եւ Միաձին Որդին հայու իսկական երկիւղածութեամբ: Նոյնը ա՛յս պարագային պիտի ըլլար, եթէ կանոնական եւ աւանդական սահմանումները յարգուէին Մայր Աթոռի հովանաւորութեամբ, ինչ որ չէ եղած ու չձեռնարկել հրահանգուած է, իրաւամբ Հայ Եկեղեցւոյ կանոնական դրութեամբ: Ո՛ւր տեսնուած է Հայ Եկեղեցւոյ ներքին կամ արտաքին տարածքին Տիրոջ արձանը որպէս պահապան: Ունինք բազմազար Խաչքարեր որոնք կը ներկայացնեն Փրկչին մեր Յիսուս Քրիստոս:

Այս օրերուն կը լսենք նոյնիսկ հիմնարկէքը կատարուելիք նախաձեռնութեան եւ սակայն փորձանաւոր եւ ակնյայտի թիրախաւորումով որ գերակշիռ պէտք է ըլլայ մեր որոշումներուն մէջ: Այլապէս ցաւատանջ գոյջումը յետոյ ոչինչ պիտի արժէ, եւ հայուն պարտքը մղձաւանջի վերածէ:

Մայր Աթոռ արդէն իսկ պաշտօնապէս զգուշացուցած է այլապէս հակահանրական նկատելով սոյն նախաձեռնութիւնը: Իմ այս դիտարութեամբ կը շեշտեմ կացութեան շատ փորձանաւոր ըլլալը վերոյիշեալ շատ լուրջ պատճառով:



Ձէյթունի ապստամբութեան Հնչակեան 6 ղեկավարները

մանագրութիւն մը՝ հետեւեալ յօդուածներէ կազմուած.-

1. Ձէյթունցիք կը մերժեն կառավարութեան յանձնել Հնչակեան ղեկավարները:

2. Հնչակեան վեց ղեկավարները թուրքիայէն մինչեւ Եւրոպա պիտի անցնին ապահով եւ անվնաս կերպով եւ հարկ եղած պատուով՝ Օսմանեան պետութեան ծախքով:

3. Դեսպանները իրենց հիւպատոսներու միջոցով՝ որոնք կը վարեն սոյն բանակցութիւնները, երաշխաւորեն յօդուած երկրորդի ճշգրիտ գործադրութիւնը՝ միեւնոյն եղանակով, ինչպէս կը կատարուի եւրոպական հպատակներու նկատմամբ:

4. Կատարեալ եւ ամբողջական ներում ո՛չ միայն զէյթունցիներուն, այլ եւ այնտեղ ապստամբ գիւղացիներուն, ճամբորդներուն եւ հայ ասպատակային խումբերուն:

5. Պիտի հաստատուի եւրոպացի քրիստոնեայ կառավարիչ մը, որ պիտի ընտրուի վեց պետութիւններու հաւանութեամբ:

6. Ձէյթունի ոստիկանները,

կայքի մէջ թուրք եւ չէրքէզ գիւղացիներէն եւս վերցուին գէնքերը:

12. Զօրանոցի վերաշինման ծախսերը պիտի հոգայ Օսմանեան կառավարութիւնը:

13. Օսմանեան բանակը պիտի պարպէ Ձէյթունի գաւառը եւ հեռանայ, միայն թէ արտաքին պաշտպանութեան համար պիտի մնայ մէկ գունդ, բայց որեւէ իրաւունք պիտի չունենայ միջամտելու Ձէյթունի ներքին գործերուն:

14. Եւրոպական բանակցող հիւպատոսները Ձէյթունէն պէտք չէ հեռանան մինչեւ ներկայ համաձայնագրին տրամադրութիւններուն անթերի գործադրումը:

15. Հաշտութեան ներկայ պայմաններուն գործադրութիւնը երաշխաւորուած է վեց պետութիւններու ղեկավարներուն եւ Բ. Դրան կողմէ կնքուած պայմանագրով:

Ձէյթունի ապստամբութեան պատրաստութիւնը՝ սկսաւ տարիներ առաջ եւ փոխանակ ժամկէտին (1894)՝ սկսաւ 1895-ին եւ վերջ գտաւ 1896-ին: Ձէյթունցիները տուին 150 անձի կորուստ, իսկ թուրքերը հազարաւոր:



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE ◦ DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS ◦ WEAPON CHARGES
- DRUG OFFENSES ◦ SEX CRIMES
- THEFT CRIMES ◦ GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.



LAW OFFICES OF ALICE TAVOUKJIAN, PC

www.TAVOUKJIANLAW.com 135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801

CALL FOR A FREE CONSULTATION 626.386.8606

AMAA-ի Գործադիր Տնօրենը Կ'այցելէ Պոլսոյ Առաքելութեան Դաշտը



175 ամեակի ոգեկոչման միջոցառումներէն ետք, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան Գործադիր Տնօրեն՝ Զաւէն Խանճեան իր տիկնոջ Սոնայի հետ Ուրբաթ Յուլիս 16, 2022-ին մեկնեցաւ Պոլիս՝ կարճատեւ պաշտօնական այցի մը, ուր անոնց ողջունեց Կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական Եկեղեցիի Հովիւ՝ Վեր. Գրիգոր Աղապալօղլուն:

Կիրակի Յուլիսի 17-ին, Պր. Խանճեան մասնակցեցաւ Կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական Եկեղեցիի պաշտամունքին եւ իր պատգամը մատուց Հայերէն լեզուով, իսկ Վեր. Աղապալօղլու գայն թարգմանեց Թրքերէնի: Պատգամը հիմնուած էր Մատթէոս 5. 14-16-ի վրայ՝ «Դուք էք աշխարհի լոյսը»: Երկուշաբթի, Յուլիս 18-ին, Պր. Խանճեան եւ իր կողակիցը Սոնա Խանճեան, Վեր. Աղապալօղլուի ընկերակցութեամբ այցելեցին

բեր պատգամը, ինչպէս նաեւ Նորին Ամենապատուութեան շնորհաւորականը՝ որոնք ընդունուած էին մեծ ուրախութեամբ:

Նորին Ամենապատուութիւնը անգամ մը եւս շնորհաւորեց Հայ Աւետարանական Եկեղեցւոյ 175-ամեակը եւ ընդգծեց մերօրեայ պայմաններուն մէջ Սուրբ Գիրքի քարոզութեան կարեւորութիւնը, նկատելով որ մեր ապրած ժամանակներուն, մարդիկ երբեմն Սուրբ Գիրքի նկատմամբ մերժողական կեցուածք որդեգրելը սխրագործութիւն կը նկատեն: Ան անդրադարձաւ, որ Սուրբ Գիրքի պատրաստակամութեամբ ընկալման ժամանակներուն մեր ժողովուրդը օրհնուելով օրհնուած է: Ան մաղթեց, որ հաւատքով հրաշքներ ապրած մեր պապերուն օրինակը ընդգրկելով շարունակենք մեր Քրիստոնէական հաւատքի կեանքը: Պր. Խանճեան, նաեւ անդրա-

մը գոյացած էր: Ան նաեւ ընդգծեց, թէ Պոլսոյ մէջ կար միջեկեղեցական առողջ յարաբերութիւններ, որոնց արդիւնքը եղած էր Թրքերէն, Հայերէն եւ Անգլերէն լեզուներով հրատարակուած Քրիստոնէութեան Հիմնական Սկզբունքները պարունակող գիրքը, որուն նմանը ցարդ չէ տեսնուած: Նորին Ամենապատուութիւնը այս գիրքէն, ինչպէս նաեւ իր հեղինակած «Երկու Ուխտաւոր» գիրքէն օրինակներ նուիրեց հիւրերուն:

Հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին ընծայուած հիւրասիրութեան եւ երկխօսութեան համար եւ հրաժեշտ առին Նորին Ամենապատուութենէն:

որոնք «դուրս մնացած են» համակարգէն, բայց ջերմօրէն ընդգրկուած Կէտիկ Փաշայի մեր Եկեղեցիին կողմէ, որուն կ'աջակցի նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը: Երեխաները այստեղ կը ճանչնան, կը սորվին եւ կը գիտակցին իրենց ազգային ինքնութեան, ծագումին եւ Քրիստոնէական հաւատքին:

Յուլիսի 19-ին՝ Պոլիս իրենց այցելութեան վերջին օրը, Պր. Խանճեան իր տիկնոջ, Վեր. Աղապալօղլուի, Հրանդ Տինքի անուան դպրոցի երեխաներուն, ուսուցիչներուն եւ անձնակազմին, ինչպէս նաեւ Քէմբ Արմէնի Շինարարութեան Յանձնախումբի անդամներուն,



Նոյն օրը Պր. Խանճեան եւ իր տիկնոջ՝ Սոնայի, Վեր. Աղապալօղլուի ուղեկցութեամբ այցելեցին Պոլսոյ Հայ Կաթողիկէ Համայնքի Արքեպիսկոպոս՝ Պողոս Լեւոն Զեքիեանին, Պէյօղլու քաղաքի Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան Մայր Եկեղեցիին մէջ: Հիւրերուն միացաւ նաեւ Տէր Վարդան Քահանայ Գազանճեանը:

Անոնք քննարկեցին Պոլսոյ եւ տարածաշրջանի Հայ համայնքին վերաբերող հարցեր: Արքեպիսկոպոս Զեքիեան աջակցութիւն յայտնեց Թուզլայի «Արմէն» ճամբարի վերակառուցմանը եւ հաստատեց Կաթողիկէ Եկեղեցիի հակուածութիւնը՝ ներգրաւուելու ծրագրին: Հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին Գերապայծառին ջերմ ընդունելութեան համար:

Յուլիսի 18-ին Տէր եւ Տիկին Խանճեանները այցելեցին նաեւ Կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ գտնուող Հրանդ Տինքի անուան դպրոցը: Անոնք շփում ունեցան մանկապարտէզէն 9-րդ դասարանի աշակերտներուն հետ, որոնք հիւրերուն ներկայացուցին ասմունքի եւ երգերու փոքրիկ յայտագիր մը: Յուլիսի էր տեսնել այս փոքր կղզին՝ պարտադրուած ազգային ինքնութեան «Կէդո»ն: Այս երեխաները ու անոնց դպրոցը կը յիշեցնէր եւ հաւասարագոր էր նախկին «Պոլսոյ Պատանեկան Տան»՝ Երեխաներ,

Հայ երեք յարանուանութիւններու ներկայացուցիչներուն, եւ Կէտիկ Փաշայի Քաղաքապետարանի ներկայացուցիչներուն հետ այցելեցին Քէմբ Արմէն: Քաղաքապետարանի կողմէ տրամադրուած էր յատուկ պատ մը, որոնք հիւրերուն հրաւիրեցին նաեւ ճաշի այցելութենէն ետք: Ճամբարին մէջ անոնք վերջիչեցին «Քէմբ Արմէնը» եւ երկու Հրանդները՝ Կիւզլլեան եւ Տինք, եւ խոստացան իրականացնել ճամբարը՝ համայնքի երեխաներուն եւ երիտասարդներուն ընդհանրական ծառայութեան համար վերակառուցելու երազանքը: Թրքական թերթերը եւ հեռուստալրագրողները ճամբարին մէջ հանդիպեցան հիւրերուն եւ հարցազրոյց ունեցան անոնց հետ:

«Յուլիսի փորձառութիւն կը գզալ Քէմբ Արմէնի ու անոր հերոսներու եւ հերոսուհիներու թողած ժառանգութիւնը եւ համայնքային նոր ճամբարի մը խոստումը, որ կը յաւերժացնէ այդ ժառանգութիւնը՝ յառաջ բերելով նոր, ինքնագիտակից, ազգային եւ հոգեւոր արժէքներու հաւատարիմ երիտասարդ սերունդ մը Պոլսոյ մէջ: Աւետարանականը իր ձեռքը կ'երկարէ Հայ Առաքելական եւ Կաթողիկէ եկեղեցիներուն, խոստանալով աջակցիլ նոր ճամբարի վերակառուցման աշխատանքներուն, ի շահ համայնքի երեխաներուն եւ երիտասարդներուն» ըսաւ Պր. Խանճեան:



Պոլսոյ Պատրիարքութիւնը, ուր անոնք սիրով ընդունուեցան Ն.Ս. Սահակ Բ. Նաշալեան Պատրիարքին կողմէ: Ընդունելութեան ներկայ գտնուեցան նաեւ Պատրիարքական փոխանորդ Արժ. Տ. Գրիգոր Ա. Քհնյ. Տամատեան եւ Աթոռի Միջեկեղեցական Բաժնի Տեսուչ՝ Արժ. Տ. Տրդատ Ա. Քհնյ. Ուզունեան:

Պր. Խանճեան նախ շնորհաւորեց Նորին Ամենապատուութեան ընտրութիւնը, ապա շնորհակալութիւն յայտնեց ընծայուած ընդունելութեան համար:

Պր. Խանճեան գոհունակութեամբ անդրադարձաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 175-ամեակին առթիւ Երեւանի մէջ տեղի ունեցած հանդիսութեան եւ երախտիքով յիշեց, Գերշ. Տ. Նաթան Ս. Արքեպս. Յովհաննիսեանի միջոցաւ փոխանցուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնա-

դարձաւ Թուզլայի Քէմբի Արմէնի վերակառուցման ծրագրին եւ յայտնեց, թէ կ'ակնկալէին Նորին Ամենապատուութեան բարոյական աջակցութիւնը եւ օրհնութիւնը: Նորին Ամենապատուութիւնը ընդգծեց, թէ հաստատութեան իրաւատէրը Հայ Աւետարանական համայնքն էր եւ քանի որ ծրագիրը առանց դաւանական խտրութեան պիտի օգտագործուէր Հայ համայնքի անդամներու կողմէ, կատարուած աշխատանքը կ'արժանանար Պատրիարքական Աթոռի եւ Հայ Կաթողիկէ Արքեպիսկոպոսարանի հետաքրքրութեան: Նաեւ յայտնեց, թէ թեյադրութիւններ ըրած էր կատարելի նուիրահաւաքման՝ ինչպէս նաեւ մատակարարութեան եւ վարչութեան համար մշակելի ծրագիրներու մասին:

Պր. Խանճեան իր գոհունակութիւնը յայտնեց, թէ այսպիսի նպատակի մը իրագործման համար միջհամայնքային հասկացողութիւն


ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ֆրեզնոյի Հայկական Մատենաշարի Հրատարակած «Աշխարհի Կինը» Հատորը՝ Պարուհի Եւ Գրագէտ Արմէն Օհանեանի Մասին

Ֆրեզնոյի Գալիֆոռնիոյ նահանգային համալսարանի հրատարակչատան հայկական մատենաշարը լոյս ընծայեց իր 16րդ հատորը՝ վարդան Մատթէոսեանի եւ Արծուի Բախչինեանի «Աշխարհի կինը. Արմէն Օհանեան՝ «Համախեցի պարուհին» (A Woman of the World: Armen Ohanian, the 'Dancer of Shamakha')»:

Հեղինակները կը ներկայացնեն արտասովոր հայուհի մը՝ պարուհի եւ գրագէտ Արմէն Օհանեանի (1888-1976) հետաքրքրական կենսագրութիւնը: Կովկաս ծնած աչա կինը ծանօթ էր կէս տասնեակ լեզուներու եւ իսկապէս «աշխարհի կին» մըն էր, որ ապրած է այնպիսի ժամանակներու եւ վայրերու մէջ, ինչպիսիք են ռուսական Կովկասը, Իրանի սահմանադրական յեղափոխութիւնը, «Հիւանալի դարաշրջանը» (La Belle époque) Ֆրանսայի մէջ, «Աղմկալից 20ականները» (The Roaring Twenties) Միացեալ Նահանգներու մէջ, վաղ Խորհրդային Միութիւնը, իր օրերը աւարտելով Մեքսիքոյի մէջ, առեղծոճածներով լի կեանք մը ապրելէ ետք:

Օհանեան դերասանուհի եղած է Կովկաս, թատրոնի բեմադրիչ՝ Պարսկաստանի մէջ, գրագէտ՝ Ֆրանսայի մէջ, եւ գրականագէտ ու թարգմանիչ՝ Մեքսիքոյի մէջ, բազմաթիւ մշակույթներու կամուրջ ըլլալով: Ամենէն աւելի հռչակուած է իբրեւ պարուհի Ասիայէն մինչեւ Ափրիկէ, Եւրոպայէն մինչեւ Ամերիկա՝ «Համախեցի պարուհի» եւ «պարսիկ պարուհի» մակդիրներով: Անոր պարերը մաս կազմած են Արեւմուտքի մէջ տարածուող Մերձավոր եւ Հեռավոր Արեւելքի պարերու այն ալիքին, որոնց մեկնաբանները իրենց բնիկ մշակույթէն սնած պարարուեստ կը ներկայացնէին:



նամեակներու վրայ երկարած հետազոտութեան, որուն սկզբնական արդիւնքը հրատարակուած էր հայերէն հատորով (2007), որ այժմ կրկնապատկուած է իր ծաւալով եւ բովանդակած տեղեկութիւններով: Օգտագործելով արխիւային եւ տպագիր բազմալեզու եւ բազմազան աղբիւրներու հսկայական քանակ մը, հեղինակները նոր էջեր կը բանան արեւելեան բեմական պարի, մշակութային եւ սեռատեսակային (gender) հարցերու, սփիւռքագիտութեան եւ այլ նիւթերու մասնագէտներուն, ինչպէս եւ հետաքրքրասէր ընթերցողին:

Պատմաբան եւ գրականագէտ վարդան Մատթէոսեան լայն հետաքրքրութիւններ ունի հայ դասական եւ ժամանակակից մշակույթի ծիրին մէջ: Հրատարակած է հայերէն, սպաներէն եւ անգլերէն ինքն գիրք, աւելի քան երկու տասնեակ թարգմանութիւն եւ շարք մը խմբագրուած հատորներ: Այժմ կը վարէ Հայաստանեայց Եկեղեցւոյ



Նշանաւոր նկարիչներ եւ քանդակագործներ պատկերացուցած են Արմէն Օհանեանը, որուն մասին վկայած են շատ չափնի ժամանակակիցներ իրենց նամակներուն եւ յուշերուն մէջ: Անոր կեանքը անցած է երկիրներու, լեզուներու եւ մշակույթներու սահմանները (գրած է չորս լեզուներով՝ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն եւ սպաներէն, իսկ գործերը հրատարակուած են առնուազն տասնչորս երկիրներու մէջ) եւ ընդգծած՝ «սփիւռք» հասկացութեան հետ միահիւստուած տարրեր, ինչպէս անդրազգայնութիւն, բազմալեզուութիւն, բազմամշակութայնութիւն եւ հայրենիքի բազմակողմանի ըմբռնում:

Վ. Մատթէոսեանի եւ Ա. Բախչինեանի համատեղ այս աշխատութիւնը արդիւնքն է երկու տաս-



Արեւելեան թեմի Ազգային Առաջնորդարանի (Նիւ Եորք) գիւսնապետի պաշտօնը:

Բանասէր Արծուի Բախչինեան՝ Սփիւռքի պատմութեան եւ մշակույթի մասնագէտ, նաեւ գրող եւ թարգմանիչ է: Հեղինակած, խմբագրած եւ թարգմանած է մօտ քսան գիրք, եւ մշտական աշխատակից է հայերէն, անգլերէն եւ ռուսերէն պարբերականներու: Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի (Երեւան) գիտաշխատող է:

Ֆրեզնոյի Գալիֆոռնիոյ նահանգային համալսարանի հայկական մատենաշարը ստեղծուած է «Մ. Վիկտորիա Գարակէօզեան Գազան եւ Հենրի Ս. Նանգալեան Գազան» հիմնադրամի առատաձեռն աջակցութեամբ: Մատենա-

Բարեգործական Ձեռնարկ Սը

«Ինչ մնաց, կեանքէն ինձի ինչ մնաց, ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ այդ միայն»

Վ.Թ.



ԽԱՉԻԿ ԾԱՆՈՅԵԱՆ

Կիրակի, Յուլիս 10, 2022, կ.ե. ժամը 5:00-ին Կլենտէյլի Շիրազ ճաշարանի մէջ, տեղի ունեցաւ Աստուածահաճոյ շատ գեղեցիկ եւ ազնիւ ձեռնարկ մը, ի նպաստ Հայաստանի մէջ գործող «Թիւֆէնկեան Հիմնարկ»ի «Ընտանիքի եւ Համայնքի» ծրագրին:

Ձեռնարկը կը հովանաւորէր ԱՄՆ Արեւմտեան Թեմի եւ Մեքսիքոյի Միացեալ Նահանգնաց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Այդ օր Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. էջմիածին կը գտնուէր, Նորին Սրբազանութեան կը ներկայացնէր Փաստիւնայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շատ սիրելի հոգեւոր հովիւ՝ Արժ. Տէր Սարգիս Ա.Ք. Փեթրոսեան:

Նմանապէս այդ օր իր օրհնաբեր ներկայութեամբ սոյն դրամահաւքը կը պատուէր Արմաւիրի Շրջանի Թեմի բազմաշնորհ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սիոն Արք. Ադամեան:

Իսկ «Թիւֆէնկեան Հիմնարկ»էն ներկայ էին Մեծամօրի շրջանի մէջ գործող անպաշտպան փոքրիկներու ապաստարաններու նախագահ Տիկ. Քնարիկ Գարանֆիլեան, ինչպէս նաեւ «Թիւֆէնկեան Հիմնարկ»ի կեդրոնական հոգաբարձութեան անդամ՝ Տիար Անդրանիկ Գասապեան:

Այս ձեռնարկը կազմակերպուած էր հիւրընկալութեամբ եւ նախաձեռնութեամբ Լոս Անձելէսի մէջ գործող Իրաքահայ Ընտանեկան Միութեան կողմէ: Այս Միութիւնը 43 տարի է իվեր կը ծառայէ եւ օգնութեան ձեռք երկարած է Լոս Անձելէսի, Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան ծով կարիքներուն:

«Թիւֆէնկեան Հիմնարկ»ը տարիներէ իվեր մօտ 600-է աւելի անպատուար փոքրիկներու եւ դժուարութեանց մէջ եղող մայրերու անոնց տուն, սնունդ եւ ամէն տեսակ օժանդակութիւն կը տրամադրէ:

Հանդիսավար Վահէ Սարկաւազ Չարխիթեանի բացման եւ բարի գալուստի խօսքով մը ներկայացուց օրուայ ձեռնարկին նպատակը, Թիւֆէնկեան եւ Իրաքահայ Ընտանեկան Միութեան բազմաթիւ եւ բազմերես ծառայութիւն-

ները: Ապա Վահէ Սարկաւազ գրութիւններ եւ նկարներ ցուցադրեց «Թիւֆէնկեան Հիմնարկ»էն:

Այդ նկարներուն մէջ կային «Հիմնարկ»ի ապաստարաններու մէջ ապրող փոքրիկներու նկարներ, որոնք այդ տուններուն մէջ սնունդ, հոգատարութիւն, հագուստներ կը ստանան եւ միայն գիշերները իրենց տունները կ'երթան քնանալու համար:

Ապա ելոյթ ունեցան «Թիւֆէնկեան Հիմնարկ»ի ծրագրիին նախագահ՝ Տիկ. Քնարիկ Գարանֆիլեան եւ «Թիւֆէնկեան Հիմնարկ»ի կեդրոնական վարչութեան անդամ՝ Տիար Անդրանիկ Գասապեան եւ Իրաքահայ Ընտանեկան Միութեան նախագահ Տոքթ. Մարալ Անճարկօլեան: Բոլոր խօսողները նկարագրեցին «Ընտանիք եւ Համայնք» ծրագրին աշխատանքները, յատկապէս 44 օրեայ պատերազմէն ետք, մեծ թիւով փոքրիկներ գրկուած են բաւարար սնունդէ եւ հոգատարութենէն: Ճիշդ ասոր համար է, որ «Ընտանիք եւ Համայնք» ծրագիր մշակուեցաւ «Թիւֆէնկեան Հիմնարկ»ին կողմէ:

Տոքթ. Մարալ Անճարկօլեան վերջերս Հայաստան եղած օրերուն այցելած է Մեծամօրի մէջ գործող այդ ապաստարանները եւ հոն ապրող փոքրիկներու գծած նկարներէն մօտ 16 հատ բերելով, այդ գիշեր գնուեցան ներկաներուն կողմէ:

Արմաւիրի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սիոն Արք. Ադամեան փակման եւ սրտի խօսքով խորապէս յուզեց եւ խոովեց ներկաներուն հոգիները:

Ազգային եւ հայրենասիրական գեղեցկագոյն մթնոլորտի մէջ ներկայ եղողները իրենց սիրտերուն հետ նաեւ իրենց գրպանները բացին, դժուարութեան մէջ մեր հայ մանուկներուն օգնութեան համար, գոյացնելով կոկիկ գումար մը:

Միւրելի հայրենակիցներ, բոլոր անոնք, որոնք կը փափաքին նման հայրենասիրական եւ ազգագուտ ծրագիր իրենց նպաստը բերելով, կրնան իրենց նուէրները դրկել հետեւեալ անունին եւ հասցէին.

Toufengian Foundation
c/o Mr© Antranig Kasparian
20 Capital Drive
Moonachine, N©J© 07047

շարի գլխաւոր խմբագիրը փոթեփետր Պարլո Տէր Մկրտիչեանն է:

«Աշխարհի կինը. Արմէն Օհանեանը»՝ «Համախեցի պարուհին» հատորը կարելի է ձեռք բերել «Ապ-

րիլ» գրատունէն, Հայկական Ուսմանց եւ Հետազոտութեան Ազգային Ընկերակցութեան (NAASR) գրախանութէն եւ Ազգային Առաջնորդարանի գրախանութէն:

Գալուստ Կիւլպէնկեանի Յիշատակին Նուիրուած Միջոցառումներ



Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամը, ամէն տարի Յուլիսի 20-ին տօնուած է իր հիմնադրի յիշատակը: Հայազգի նախնային մագնատ եւ մեծ բարերարին նուիրուած այս տարուայ միջոցառումներին հրաւիրուած էր մասնակցելու նաեւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը:

Առաւօտեան Սրբազան Հայրը այցելեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամ, ուր հանդիպում ունեցաւ նրա նորընտիր նախագահ Անտոնիօ Ֆոյժոյի հետ: Ներկայ էին նաեւ հիմնադրամի խնամակալների խորհրդի մշտական անդամ Մարտին Եսայեանը եւ հիմնադրամի հայկական բաժնի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը:

աւարտին Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանը «Հոգևոցն հանգուցելոց...» արտասանեց հանգուցելի յիշատակին: Յիշելով, Աստուածաշնչի Ծննդոց գրքից Աստծոյ խօսքերը. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լցրէ՛ք երկիրն ու տիրեցէ՛ք դրան. իշխէ՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների վրայ ու երկրի վրայ սողացող բոլոր կենդանիների վրայ», նա նշեց, որ աստուածավախ եւ խորհաւատքի տէր Գալուստ Սարգիս Կիւլպէնկեանը լիովին գիտակցում էր այն հնարաւորութիւնների մասին, որ Աստուած տուել է մարդկութեանը հենց սկզբից, եւ նրա արտասովոր կեանքն ու ձեռքբերումները, դրա վկայութիւնն են: Սրբազան Հայրը համոզմունք



Ջերմ եւ մտերիմ մթնոլորտում անցած շուրջ կէսփամեայ գրոյցի ընթացքում նրանք նաեւ յիշատակեցին հայազգի մէկ այլ նշանաւոր դէմքերից՝ ամերիկահայ հասարակական գործիչ, Նիւ Եորքի Քարնեգի կորպորացիայի նախագահ, «Աւրորա» մրցանակի եւ նախաձեռնութեան համահիմնադիր Վարդան Գրիգորեանին, ում հետ հիմնադրամի նախագահ առիթ էր ունեցել առնչուելու վերջինիս ԱՄՆ-ի Պրաունի համալսարանը նախագահելու տարիներին:

Սրբազան Հայրը առանձնազրոյց ունեցաւ նաեւ Մարտին Եսայեանի հետ, որը Գալուստ Կիւլպէնկեանի դատեր Ռիթա Կիւլպէնկեանի թոռն է: Ապա ներկաները ուղեւորուեցին գլխաւոր շէնքի շուրջը գտնուող այգի, ուր ծաղկեպսակ գետեղեցին եւ խոնարհուեցին հիմնադրամի հիմնադրի արձանի առջեւ:

Ապա, ժամը 12:15-ին մօտակայ Igreja de Nossa Senhora do Rosrio de Fatima եկեղեցում մատուցուեց պատարագ Գալուստ Սարգիս Կիւլպէնկեանի հոգու խաղաղութեան համար: Արարողութեան

յայտնեց, որ աշխարհն այսօր կարիք ունի Գալուստ Կիւլպէնկեանի նման անհատներ, ով շատ հպարտ լինելով իր հայ ինքնութեամբ, միաժամանակ օժտուած էր համաշխարհային անհատականութեամբ: Նրա բազմաթիւ միջազգային բարեգործական ջանքերը՝ ուղղուած մարդկանց կեանքի որակը բարելաւելու՝ արուեստի, բարեգործութեան, գիտութեան եւ կրթութեան միջոցով, նրան դարձրին լաւ տնտես եւ աշխարհի քաղաքացի:

Սրբազան Հայրը փառք տուեց Աստծուն, որ Կիւլպէնկեան Հիմնադրամի խորհրդի նախկին եւ ներկայ անդամները, 1956 թուականին հիմնադրման օրուանից, շարունակում են աջակցել գիտութեան, կրթութեան, առողջապահութեան եւ արուեստի զարգացմանը բազմաթիւ երկրներում՝ չանտեսելով մայր հայրենիքի եւ սփիւռքի կարիքները:

Իր խօսքի աւարտին նա մաղթեց, որ հայրերու գորացող ոգին շարունակի գոյատեւել եւ ոգեշնչման աղբիւր ծառայել արդի համաշխարհային առաջնորդների

«Գնեցէք Հայաստանի Մէջ».

Քուէյթահայ Բարերարը Կ'Աշխուժացնէ Տնտեսութեան Զարգացման Նպաստող Իր Նախաձեռնութիւնը



Քուէյթահայ բարերարը, գործարար Կիրակոս Գուլում ճեան հանդէս կու գայ «Գնեցէք Հայաստանի մէջ» նախաձեռնութեամբ, որուն նպատակն է նպաստել տնտեսութեան զարգացման: Կիրակոս Գուլում ճեան նշեց, որ նախաձեռնութեան շուրջ աշխատանքները սկսած էին 2019 թուականէն, սակայն համավարակը ծրագրուած աշխատանքները ետ տարաւ: Այժմ քուէյթահայ բարերարը կրկին Հայաստանի մէջ է, նպատակ ունի տարբեր շրջանակներու մէջ աշխուժացնել «Գնեցէք Հայաստանի մէջ» արշաւը:

«Ինչպէս գիտենք, վերջին շրջանին զբօսաշրջութեան աշխուժութիւն կը նկատուի: Շատերը կը նախընտրեն գալ Հայաստան, իրենց հանգիստը այստեղ կազմակերպել: Այս արշաւին էութիւնը այն է, որ մեր հայրենակիցներուն կոչ ընենք, խրախուսենք, որ իրենց կարիքներուն համար նախատեսուած ապրանքները գնեն Հայաստանի մէջ: Ինչ կարիք կայ դուրսէն բերելու ապրանքներ, եթէ այստեղ ամէն ինչ կայ եւ հնարաւոր է հանգիստի ընթացքին գնել:

Եթէ այս նախաձեռնութիւնը տարածում ունենայ, ապա շահաւէտ պիտի ըլլայ Հայաստանի համար», ըսաւ Կիրակոս Գուլում ճեան:

Անոր խօսքով, տնտեսապէս շահաւէտ պիտի ըլլայ տեղի գործարարներուն, արտադրողներուն: Եթէ սփիւռքահայ զբօսաշրջիկները սկսին ամէն այցելութեան ժամանակ գնումներու հիմնական մասը ընել Հայաստանի մէջ, այդ կը նշանակէ, որ այստեղ այդ ապրանքներուն պահանջարկը պիտի աւելնայ: Հետեւաբար ե՛ւ վաճառողներուն համար լաւ պիտի ըլլայ, ե՛ւ արտադրողներուն: Բացի անկէ, երկիր եկած արտարժուէրին ծաւալը պիտի աւելնայ ու անկէ

պիտի շահի միայն պետութիւնը: Հայաստան այցելութեան ժամանակ Կիրակոս Գուլում ճեան հանդիպումներ ունեցած է Սփիւռքի գլխաւոր յանձնակատարի գրասենեակին մէջ, Զբօսաշրջութեան կոմիտէին մէջ, ներկայացուցած է իր նախաձեռնութիւնը, ինչը դրական արձագանգի արժանացած է:

Կիրակոս Գուլում ճեանը տարբեր առիթներով կը փորձէ աջակցութեան ծրագրերներով գտնուիլ Հայաստանի ու Արցախի կողքին: Ան արաբական լրատուամիջոցներուն մէջ հանդէս կու գայ հայկական հարցերու հետ կապուած յօդուածներով: Կիրակոս Գուլում ճեանը նկատեց, որ Հայոց ցեղասպանութեան հարցին հետ կապուած արաբական երկիրներու մէջ տեղեկութեան պակաս կայ:

«Ընդհանրապէս, արաբական աշխարհին մէջ հայկական հարցերը ներկայացնելու տեսանկիւնէն թերացած ենք: Անհրաժեշտ չափով չենք կրցած մեր հարցը ներկայացնել արաբ ժողովուրդին: Շատերը ամբողջական պատկերացում չունին Հայոց ցեղասպանութեան, հայկական այլ հարցերուն հետ կապուած: Ես ալ որոշեցի յօդուածներով հանդէս գալ՝ ներկայացնելով հայկական հարցերը, հակադրելով ժխտողական դիրքորոշումներուն», ըսաւ Կիրակոս Գուլում ճեանը:

Քուէյթահայ գործարարը հիմնած է «Ներսէս Ծնորհալի» կրթական մրցանակը Հալպայի եւ Քուէյթի երկրորդական վարժարաններու սաները խրախուսելու համար: Արդէն 20-է աւելի աշակերտ արժանացած է այս մրցանակին: Կիրակոս Գուլում ճեանը նկատեց, որ այն նպաստած է մրցակցութեան, յառաջդիմութեան բարձրացման: Նախաձեռնութիւնը պիտի շարունակուի նաեւ յառաջիկայ տարիներուն:

համար:

Աւելի ուշ, Հիմնադրամի կեդրոնում մատուցուեց հանդիսաւոր ճաշկերոյթ, ուր ներկայ էին հիմնադրամի խնամակալների խորհրդի անդամները եւ բազմաթիւ պաշտօնեայ անձիք:

Գալուստ Կիւլպէնկեանի յիշատակման օրը եզրափակուեց ժամը 18-ին, կեդրոնի համերգային դահլիճում Կիւլպէնկեան նուագախմբի համերգով՝ դիրիժոր Խոսէ Էդուարդօ Գոմեսի ղեկավարութեամբ: Մինչ այդ բեմից ելոյթ ունեցան հիմնադրամի նախագահ Անտոնիօ Ֆոյժոն եւ Փորթուկալիայի նախագահ Մարսելօ Ռեբելօ դէ Սոուզան: Համերգից առաջ Տ.

Խաժակ Արքեպս. Պարսամեանը առիթ ունեցաւ ողջունելու երկրի նախագահին, որն ուրախութիւն յայտնեց միջոցառմանը Սրբազան Հօր մասնակցութեան համար: Համերգին ներկայ էր նաեւ Փորթուկալիայում եւ Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետութեան դեսպան Կարէն Նազարեանը տիկնոջ հետ: Յետկէսօրին Սրբազան Հայրը եւ պարոն դեսպանը այցելեցին Կիւլպէնկեան ժամանակակից արուեստի կեդրոնի ցուցասրահներում վերջերս բացուած ամերիկահայ նկարիչ Արշիլ Գորկու եւ փորթուկալացի ժողովուրդի գծանկարների ու նկարների ցուցահանդէսը:

Ռոնալտուն Պատրաստ է Տեղափոխուելու «Աթլետիքո»

Անգլիական «Մանչեսթր Եունայթեդսի» 37-ամեայ փորձուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն պատրաստ է տեղափոխուել Մատրիտի «Աթլետիքո», որ նոր մրցաշրջանին հանդես պիտի գայ Ախոյեաններու լիգայի մէջ:

«Մանչեսթր Եունայթեդսը» համաձայն է մէկ տարուայ վարձակալութիւն արտօնել Ռոնալտուն, եթէ ան երկարաձգէ պայմանագիրը մինչեւ 2024թ. Յունիս, կը հաղորդէ բրիտանական Mirror-ը:

Ռոնալտուն 2021-ին թուրինի «Եուվենտուսէն» տեղափոխուած էր «Մանչեսթր Եունայթեդս»՝ կնքելով 2 տարուայ պայմանագիր:

Ռոնալտուն դեռ չէ միացած հոլանտացի էրիկ Տեն Հագի գլխաւորած խումբին եւ կը մարզուի Փորթուկալի մէջ:

Եւրոգէն Կլոպ. Նոր Խաղցողի Կարիք Չունիմք

Անգլիացի փոխախոյեան «Լիվերփուլըն» այս փոխադրման պատուհանի ընթացքին նոր ձեռքբերումներ չի նախատեսեր:

«Մեր կազմը ամբողջովին համալրուած է, նոր խաղցողի կարիք չունինք: Յոյս ունիմ, որ մեր խաղացողներէն ոչ ոք վնասուածք չստանար կամ հեռանալու ցանկութիւն ունեցող չըլլայ», - Կլոպի խօսքը կը մէջբերէ Sky-ը:

Այս ամբար «Լիվերփուլըն» ձեռք ձգած է յարձակող Տարուին Նունիէսին, յարձակողական ոճի կիսապաշտպան Ֆալիու Կարվալուին եւ աջ պաշտպան Քելվին Ռեմզիին:

Չալի. Զինա Յաղթանակը Կարելոր Չէ, Բայց Գաթալոնացիները Կը Սիրեն Յաղթել «Ռեալին»



Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնայի» սպանացի գլխաւոր մարզիչ Չալին մեկնաբանած է 1:0 արդիւնքով յաղթանակը ախոյեան «Ռեալի» նկատմամբ Լաս Վեկասի մէջ տեղի ունեցած ընկերական խաղին:

«Գոհ ենք արդիւնքէն, ստացանք դրական յոյզեր, ինչը գլխաւորն է այս փուլին: Հիմա յաղթանակը կարելոր չէ, բայց գաթալոնացիները կը սիրեն յաղթել «Ռեալին»:

Առաջին խաղակէսին գերազանց խաղցանք, երկրորդին այդքան ալ լաւ չեր: Մարզումային գործընթացը պտուղներ կու տայ: Տեսանք «Պարսելոնայի» լաւ խաղը, բայց պէտք է ըլլալ աւելի կայուն եւ արդիւնաւետ: «Ռեալէն» լաւ խաղցանք, ցուցադրեցինք լաւ ֆուլթայոլ: Ամէն ինչէն գոհ եմ, բացի հաշիւէն: Նոր մրցաշրջանին գլխաւորը կ'ըլլայ տիտղոսներ նուաճելը», - Չալիի խօսքը կը մէջբերէ Marca-ն:

ԱՄՆ-ու մէջ «Պարսելոնան» կը կատարէ եւս երկու ընկերական հանդիպում՝ մրցելով թուրինի «Եուվենտուսի» եւ «Նիւ Եորքի Ռեալ Պուլզի» հետ:

«Ինթերը» Պարտուեցաւ Ֆրանսայի Մէջ, Մխիթարեանը Մասնակցեցաւ Խաղին

Իտալիոյ փոխախոյեան Միլանի «Ինթերը» Ֆրանսայի մէջ հիւրընկալուեցաւ «Լանսիէն»: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբը պարտուեցաւ 0:1 արդիւնքով՝ կոլ արտօնելով հիմնական ժամանակի վերջին վայրկեանին: «Լանսիէն» աչքի ինկաւ պելճիգացի յարձակող Լոի Օպենտան:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» պահեստայիններու մէջ էր եւ 61-րդ վայրկեանին փոխարինեց թուրք կիսապաշտպան Հական Չալսանօգլուին:

Նախապատրաստական փուլի վերջին երկու խաղերուն «Ինթերը» Յուլիսի 30-ին կ'ընդունի ֆրանսական «Օլիմպիք Լիոնին», Օգոստոսի 6-ին՝ սպանական «Վիլյաուեալին»:

Թոմաս Տուխել. Արժանի Էինք Այս Պարտութեան

Լոնտոնի «Չելսիի» գերմանացի գլխաւոր մարզիչ Թոմաս Տուխելը մեկնաբանած է Լոնտոնի «Արսենալէն» կրած 0:4 արդիւնքով պարտութիւնը՝ ընկերական խաղի ընթացքին:

Արթուր Դաւթեանի Անունը Գրուեցաւ Մարմնամարզութեան Պատմութեան Էջին Վրայ



Տղաներու սպորտային մարմնամարզութիւնը համալրուեցաւ եւս մէկ տարով: Ինչպէս կը տեղեկացնէ Հայաստանի մարմնամարզութեան ֆեդերացիայի ֆէյսպուքեան էջը, Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ կայացած աշխարհի գաւաթին Արթուր Դաւթեանը նժոյգ թափեր մարզագործիքի վրայ կատարած է նոր տարր, որն այսօր պաշտօնապէս անուանուեցաւ ԴԱԻԹԵԱՆ:

Աւելցնենք, որ հայ մարմնամարզիկներէն իրենց անունով տարրեր ունին նաեւ Հրանտ Շահինեանը (նժոյգ թափեր), Ալբերտ Ագարեանը (օղակներ), Արթուր Յակոբեանը (յենացատկ), Վահագն Ստեփանեանը (նժոյգ թափեր), Վահագն Դաւթեանը (օղակներ) եւ Հուրի Գրեբշեանը (տ/բ գուգափայտ):

Վահան Բիչախչեանի Գերազանց Կոլը

Լեհաստանի առաջնութեան երկրորդ հանգրուանին Շչեցինի «Պոզոնը» վրոցլաւի մէջ հիւրընկալուեցաւ «Շչիոնսկիէն» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

Հիւրերու կոլը նշանակեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Վահան Բիչախչեանը՝ հաշիւը դարձնելով 1:1: Սակայն դաշտի տէրերը ընդմիջումէն յետոյ կարողացան նաեւ երկրորդ կոլը նշանակել եւ հասնիլ յաղթանակի: Բիչախչեանը նաեւ դեղին քարտ ստացաւ:

«Շչիոնսկը» 4 կէսով չորրորդն է, «Պոզոնն» ունի 3 միաւոր եւ 8-րդն է:




Սատիո Մանեն՝ Ափրիկէի Լաւագոյն Ֆուլթայոլիստ

Սենեկալի հաւաքականի յարձակող Սատիո Մանեն անցած մրցաշրջանին ճանչցուած է Ափրիկէի լաւագոյն ֆուլթայոլիստ:

Լաւագոյն եռեակին մէջ ան իր ետին թողած է անգլիական «Լիվերփուլըն» եգիպտացի յարձակող Մոհամեմ Սալահին եւ Լոնտոնի «Չելսիի» սենեկալցի դարպասապահ Էտուար Մենդիին:

Սենեկալի հաւաքականը Մանէի հետ առաջին անգամ նուաճած էր Ափրիկեան ազգերու գաւաթը: Սենեկալի հաւաքականը ճանչուած է լաւագոյնը:

Յիշեցնենք, որ Սատիո Մանեն անգլիական «Լիվերփուլըն» տեղափոխուած է Գերմանիոյ ախոյեան Միլանի «Պալըն»:



«Մանչըսթեր Սիթին» Ուժեղ Էր «Պայրընէն»

Անգլիայի ախոյեան «Մանչըսթեր Սիթին» ու Գերմանիոյ ախոյեան Միլանի «Պալընը» ընկերական հանդիպում կատարեց ԱՄՆ-ի Ուիսքոնսոն նահանգի Կրին Պէյ քաղաքին մէջ:

Գատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած խումբը յաղթանակի հասաւ 1:0 արդիւնքով:

12-րդ վայրկեանին աչքի ինկաւ մանչըսթերեան ակումբի նորեկ, նորվեկիացի յարձակող էրլինկ Հոլանտը:

«Արժանի էինք այս պարտութեան, մրցունակ չէինք: «Արսենալի» ֆիզիքական եւ հոգեբանական պատրաստութեան մակարդակը շատ աւելի բարձր էր, քան մերը: «Արսենալի» ամենաուժեղ կազմն է վերջին տարիներուն: Հենց այս կազմով ալ անոնք կը պայքարին Փրեմիեր Լիգայի մէջ:

ՄԱՅԱԶԴ



ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ (1930-2022)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ եղբօր՝ ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Յուլիս 12, 2022ին:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, Յուլիս 29, 2022ին առաւօտեան ժամը 9:30ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Սպիտակ եկեղեցւոյ մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles CA 90068:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Մայրանուշ Սողոմոնեան Դուստրը՝ Տիկ. Մարալ Տարագճեան եւ զաւակունք Ջաւահիր՝ Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Elda Սողոմոնեան Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Կարինէ Եահինեան եւ զաւակունք Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սայբի Պիլանճեան եւ զաւակունք Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Նորայր եւ Անահիտ Սողոմոնեան եւ զաւակունք (Canada) Տէր Տաթեւ Քհնյ. եւ Տիկ. Արաքսի Թաթուլեան եւ զաւակունք Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան եւ զաւակունք Տիկ. Գարմէն Գօփուշեան եւ զաւակունք Տիկ. Մակի Գօփուշեան եւ զաւակունք եւ համայն Սողոմոնեան, Գօփուշեան, Տարագճեան, Մաթոսեան, Պարսամեան, Կիւրիւնեան, Կէօզէրեան, Մեհրապեան, Թաթուլեան, Պիլանճեան եւ Եահինեան ընտանիքներ:

ՄԱՅԱԶԴ



ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆ (1941-2022)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, քրոջ, մեծ մօր, մօրաքրոջ, հօրաքրոջ՝ ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ մահը որ պատահեցաւ 18 Յուլիս, 2022ին:

Յուղարկաւորութեան եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 3 Օգոստոս, 2022ին, առաւօտեան ժամը 10:00ին Պըրպէնքի Ս. Ղեւոնդեանց եկեղեցւոյ մէջ, 3325 North Glenoaks Blvd. Burbank, CA 91504, որմէ ետք Թաղման կարգը պիտի կատարուի Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան մէջ Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068:

- Սգակիրներ՝ Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Արմէն եւ Մարինէ Խոզազեան եւ զաւակունք Դուստրը՝ Անուշ Թովմասեան եւ որդին Ջաւահիր՝ Արթուր Թովմասեան Քոյրը՝ Իսկուհի Քէօզկէրեան եւ զաւակունք Հանգուցեալի եղբօր ընտանիքը՝ Մարի Սինանեան եւ զաւակունք Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Նուարդ Սինանեան եւ զաւակը Տէր եւ Տիկ. Միսաք եւ Հռիփսիմէ Թովմասեան եւ զաւակունք եւ համայն Թովմասեան, Քէօզկէրեան, Սինանեան, Խոզազեան, Կօշկարեան, Շատարեան, Քէյփանեան, Ղարիպեան, Դանիէլեան, Աճոյեան, Բէննէլեան, Մուրատեան, Նազարեան, Աթթարեան, Աքմաքճեան, Աջապահեան ընտանիքներ ու հարազատներ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ

ԱՆԱՀԻՏ ՄՈՒԹԱՅԵԱՆ-ՊԷՐՊԷՐԵԱՆԻ մահուան երկրորդ տարելիցին եւ ՅՈՎՍԷՓ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ մահուան երրորդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 31 Յուլիս, 2022ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ 2215 East Colorado Blvd. Pasadena CA 91107:

- Խնդրողներն են՝ Տիկ. Ազնիւ Մուժաֆեան եւ զաւակը Մինաս Այրի Տիկ. Լիզա Մուժաֆեան եւ զաւակները

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ մահուան առթիւ մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

«Մասիս»

Հանրային Բանավէճ

Շարունակուած էջ 8-էն

ընտանեկան բռնութեան մասին դէպքեր, օրէնքներ եւ ցուցմունքներ ֆրզիկական եւ հոգեկան բռնութիւններէն պաշտպանուելու նպատակով: Իրաւաբան Մարինա Մանուկեան պիտի պարզաբանէ Roe ընդդէմ Wade օրէնքի բեկանումը եւ պիտի ակնարկէ ընտանեկան բռնութեան մասին: Հոգեբան Նորա Շիթիլեան

պիտի ներկայացնէ ընտանեկան բռնութիւնը առնչելով իր հիւանդներու եւ մասնագիտական փորձառութեան դէպքերուն հետ, իսկ հոգեբան Քնար Քահուէճեան, պիտի զեկուցէ, թէ ինչպէ՞ս կարելի է յարմարիլ կեանքի յաճախակի փոփոխուող պայմաններուն հետ:

ՍԵՒԱՆ ՊՕՂՈՍ-ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 * \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680



ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

ՓԱՌԱՏՕՆ

SUNDAY, SEPTEMBER 18, 2022

STARTING AT 11:00AM

VERDUGO PARK / GLENDALE

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY

NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

**LIVE
MUSIC**

**ARMENIAN
FOOD**

**KIDS
GAMES**

**ART
EXHIBITION**

HOSTED BY

LILIT SARGSYAN

To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցե՛ք

Նոր Սերունդ Մշակութային Միության

(818) 391-7938

FREE ADMISSION / ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ